# ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Մարիամ Մարգարյան*

## 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Ընդհանուր առմամբ, ժամանակակից պահպանողականության մեջ, իբրեւ որոշակիորեն ուրույն հոսանքներ, կարելի է առանձնացնել ավանդականներին, լիբերտարիստներին եւ նեոպահպանողականներին:

### ա) Ավանդական (դասական) պահպանողականություն

Պահպանողականության հոսանքներից պատմականորեն առաջինը ձեւավորվել է ավանդական թեքումը: Դրա ակունքներն արտահայտված են Բերքի, Մեսթրի եւ Բոնալդի կողմից առաջ քաշված դրույթներում: Այդ հոսանքը շեշտը դնում է դասական շուկայական տնտեսության, որոշ դեպքերում անգամ ֆեոդալիզմի սոցիալական կացութաձեւերի եւ բարոյական ավանդությունների պահպանման վրա: Ավանդական պահպանողականության ներկայացուցիչներն ավանդությունը կապում են կրոնի հետ: Հավատարմությունը կրոնական դրույթներին նրանց կողմից դրվում է որպես ավանդականության ապահովման կարեւորագույն միջոցներից մեկը: Կրոնի միջոցով ավանդականները ցանկանում են համերաշխություն հաստատել հասարակության բոլոր խմբերի միջեւ: Սոցիալ-տնտեսական պրոբլեմները շատ անգամ նրանք աշխատում են տեղափոխել կրոնաբարոյական հարթություն:

Ի տարբերություն նոր աջերի եւ նեոպահպանողականների, ավանդականները շեշտը դնում են ոչ թե հասարակական կյանքում պետության միջամտության չափը որոշելու վրա, այլ պետականության դրսեւորման կարեւոր չափանիշ են համարում խիստ կարգապահության եւ իշխանության հեղինակության արմատավորումը: Նման կարծիքի են, օրինակ, անգլիական ավանդական-պահպանողականները՝ իշխանությունը համարելով բոլոր ազատությունների նախադրյալը. նրանք առաջնակարգ տեղ են տալիս կարգ ու կանոնի հաստատմանը, կարգապահությանն ու իշխանության հեղինակությանը եւ ժամանակակից «արտադրողական հասարակություն»-ը դիտարկում են որպես համընդհանուր հնազանդության հասարակություն, որտեղ ռեալ ազատություններն ապահովվում են միայն ուժեղ պետության առկայությամբ:

Ավանդական պահպանողականության կոնցեպցիաները հանգում են մարդկանց կամքից անկախ գոյություն ունեցող բնական օրենքի նկատմամբ հավատի եւ այն համոզմունքի, ըստ որի՝ մարդկային հասարակությունը «հոգեւոր միություն» է, այնպիսին, ինչպիսին է եկեղեցին: Այդ պատճառով հասարակության կենսունակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ապահովել պատմականորեն ձեւավորված ավանդույթների հաջորդականությունը: Հասարակության ձեւափոխումները չպետք է ընթանան արհեստական ճանապարհով, քանի որ դրանք իրականացվում են բնական եղանակով:

**բ) Լիբերտարիստական պահպանողականություն**

Պահպանողականության լիբերտարիստական հոսանքը դասական լիբերալիզմի 18-19-րդ դարերի ավանդության ժառանգումն է: Այդ տեսանկյունից, լիբերտարիզմը մի կողմից ընդօրինակում եւ շարունակում է ազատության ձգտումը, իսկ մյուս կողմից՝ բացառում սոցիալիստական գաղափարների տարածումը: Դրա առաջացումը կապվում է, հետպատերազմյան տնտեսական աճին զուգահեռ, սոցիալիստական գաղափարների նկատմամբ առաջացող հիասթափության հետ: Լիբերտարիզմի առաջավոր ներկայացուցիչները պնդում են, որ ազատ ձեռներեցության, անհատական եւ ընտանեկան պատասխանատվության էռոզիան հանգեցնում է լճացման եւ չքավորության, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է այնպիսի լիբերտարիստական ավանդությունների վերածնունդը, ինչպիսիք են անհատականության դրսեւորումն ու ազատ շուկայական տնտեսության գոյությունը: Լիբերտարիստական պահպանողականության կողմնակիցները դիտվում են որպես «Նոր լուսավորություն» ժամանակակից ինտելեկտուալ շարժման ներկայացուցիչներ: Այդ շարժումը շարունակում է «Շոտլանդական լուսավորության» ավանդությունները, որի ելակետային դրույթն էր «առեւտրային հասարակության» գոյությունը: Սոցիալական կապերի տարածված մոդելն այստեղ համարվում է ազատ հասարակական պայմանագրի կիրառման արդյունքում հաստատված «տեր—աշխատող» կարգը:

Լիբերտարիստները հանդես եկան որպես ազատ ձեռներեցության, կարգ ու կանոնի, օրինականության ավանդական սկզբունքների ջատագովներ: Նրանք դուրս եկան լիբերալ-ռեֆորմիզմի «համընդհանուր բարեկեցության պետության» կոնցեպցիայի դեմ՝ համարելով այն դեպի սոցիալիզմ տանող ճանապարհ: Լիբերտարիստների կարծիքով, ժամանակակից չարիքների առաջացման պատճառը բնական, Աստծո կողմից շնորհված ազատ շուկայական սկզբունքների անտեսումն է պետության

կողմից: Հակադրվելով լիբերալ-ռեֆորմիզմի այն դրույթին, ըստ որի՝ ներկա հասարակարգում անհրաժեշտություն է դարձել տնտեսության պլանավորումը կամ կարգավորումը, լիբերտարիստները պնդում են, որ տնտեսության նկատմամբ իրականացվող բռնությունը, պետական սեկտորի ընդլայնումը, արդյունաբերական առանձին ճյուղերի ծրագրավորումը եւ այլ նման երեւույթներ խախտում են մարդկային կյանքի կարգավորման ամենաբնական ձեւը:

Անհատական անվտանգության, սեփականության պաշտպանության եւ այլ իրավունքներ լիբերտարիստները համարում են անխախտելի եւ անսասան: Նրանց կարծիքով, մարքսիզմը եւ սոցիալ-ժողովրդավարությունը խեղաթյուրել են մարդու իրավունքների իրական կոնցեպցիան: Վերջինները մարդկանց գիտակցության մեջ արմատավորեցին, այսպես կոչված, «պոզիտիվ» իրավունքները՝ աշխատանքի, հանգստի, արդար աշխատավարձ ստանալու, տանիք ունենալու եւ այլն: Սոցիալական հավասարության մարքսիստական պատկերացումը, ըստ լիբերտարիստների, զրկեց այդ հասկացությունը իրական հումանիստական իմաստից, որովհետեւ հայտարարեց ոչ թե «հավասար հնարավորությունների», այլ «պայմանների հավասարության» սկզբունքի գերակայությունը: Դրանով իսկ հարված հասցվեց մասնավոր սեփականության անձեռնմխելիության գաղափարին: Այս հարցում լիբերտարիստների մոտեցումները համընկնում են նեոլիբերալների եւ, ընդհանրապես, աջ լիբերալիզմի ներկայացուցիչների հայացքներին:

Լիբերտարիստներն ամենուրեք հանդես են գալիս պետության նվազագույն սոցիալական քաղաքականության օգտին, ինչն, իրենց կարծիքով, հնարավորություն է տալիս միայն թուլացնել վտանգավոր սոցիալական լարվածությունը: Նրանք կոչ են անում կառավարություններին իրենց ծրագրերի իրականացման գործում ղեկավարվել միայն շուկայի պահանջներով: Կարիքավորների օգնության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը նրանք դնում են տեղական մարմինների եւ հասարակական ինստիտուտների վրա (ընտանիքի, դպրոցի, եկեղեցու, կամավոր հատկացումներ կատարող կազմակերպությունների ու անհատների):

Լիբերտարիզմի հիմքում ընկած է այն գաղափարը, ըստ որի մարդը՝ որպես իր կյանքը միանձնյա կարգավորող սուբյեկտ, ազատ է իր գործողություններում: Նրա ազատությունը պետք է սահմանափակվի միայն այն դեպքում, երբ նա միջամտում է մյուսների անձնական կյանքին: Լիբերտարիստները հասարակությունը դիտում են որպես ինքնավար անհատներից կազմված պարզ մեխանիզմ: Այդ պատճառով նրանք կատարյալ են համարում միայն ատոմիստական հասարակությունը, որը հակադրվում է պետությանը:

Լիբերտարիզմը նմանեցնելով դասական լիբերալիզմին, չի կարելի հավասարության նշան դնել այդ երկու հոսանքների միջեւ: Դրանց քաղաքական գաղափարների սոցիալական բովանդակություններն արմատապես տարբերվում են միմյանցից: Առաջ քաշելով անհատականության եւ ազատ շուկայական հարաբերությունների պահպանման գաղափարները՝ լիբերտարիստները, միեւնույն ժամանակ, հանդես են գալիս սոցիալական հիերարխիայի պահպանման անհրաժեշտության օգտին: Նրանց կարծիքով, հասարակության մեջ միակ հնարավոր հավասարությունը «բարոյական հավասարությունն» է, իսկ ժողովրդի ավանդույթների նկատմամբ հավատն ու հարգանքը՝ արդյունավետ քաղաքականության կարեւորագույն լծակ:

### գ) Նեոպահպանողականություն

Նեոպահպանողականությունը (լիբերալ-կոնսերվատիզմ) համեմատաբար նոր հոսանք է պահպանողականության մեջ: Դրա առաջացման համար օբյեկտիվ հիմք ծառայեց 1973–1974թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Համաշխարհային ճգնաժամը կասկածի տակ առավ այն դրույթները, ըստ որոնց, ինչպես տնտեսությունը, այնպես էլ սոցիալական հարաբերություններն ու հասարակության հոգեւոր ոլորտը պարունակում են ավտոմատ կերպով գործի դրվող եւ կայունությունն ապահովող համապատասխան տարրեր: Ճգնաժամի հիմնական բովանդակությունը նեոպահպանողականները տեսան պետության անկառավարելիության մեջ, որն առաջացել էր լիբերալիզմի գաղափարներից «հղիացած» քաղաքացիների անհնազանդության եւ իշխանությունների պասիվության պատճառով: Ընդհանրապես, նեոպահպանողականությունը բավականին հաջող համապատասխանեցրեց իր ավանդական արժեքները հասարակության զարգացման հետինդուստրիալ փուլի պահանջներին: Մարդկանց կյանքի ոճերի բազմազանությունը, տեխնիկական միջավայրից նրանց կախվածության խորացումը, կյանքի արագացված տեմպերը, հոգեւոր եւ էկոլոգիական հավասարակշռության խախտումը եւ այլ երեւույթներ ճգնաժամ առաջացրին արեւմտյան երկրների հասարակական կարծիքում, որը կասկածի տակ դրեց եվրոպական քաղաքակրթության առաջնային արժեքներից շատերը: Այս պայմաններում նեոպահպանողականությունն առաջարկեց ընտանիքի ու կրոնի, ինչպես եւ՝ սոցիալական կայունության գերակայությունը: Վերջինն, ըստ նեոպահպանողականների, պետք է հենվի քաղաքացու եւ պետության փոխօգնության, բարոյական փոխադարձ պատասխանատվության, պետական կարգ ու

կանոնի, մարդու իրավունքների հարգանքի վրա: Այդ սկզբունքները հստակ ուղղված էին հասարակության մեջ զուտ մարդկային գծերի եւ ունիվերսալ բարոյական նորմերի պահպանմանը, առանց որոնց հասարակության տնտեսական եւ տեխնիկական զարգացման ոչ մի աստիճան չի կարող լրացնել մարդկանց մեջ առաջացած հոգեւոր վակուումը: Դրանց պահպանման հիմնական պատասխանատուն, ըստ նեոպահպանողականների, համարվում է անհատը: Այդ գործում նա պետք է հույս դնի, առաջին հերթին, իր կարողությունների, այլ ոչ թե պետության օժանդակության վրա: Դա, անշուշտ, կնպաստի անհատի կենսունակության, ձեռներեցության եւ նախաձեռնության զարգացմանը:

Այս մոդելն արմատապես տարբերվում է լիբերալների մոտեցումներից, ըստ որոնց անհատն ինքնուրույն պետք է գտնի կեցության իմաստը, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի պետության հետ եւ այլն: Նեոպահպանողականների կարծիքով, պետությունը պետք է հենվի բարոյական սկզբունքների եւ հասարակության միասնության պահպանման վրա, ապահովի կարգ ու կանոնի, օրինականության վրա հիմնված անհատի կենսական պայմանները՝ քաղաքական միավորումների ստեղծման հնարավորությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը, հասարակության եւ բնության փոխհարաբերությունների ներդաշնակության պահպանումը եւ այլն: Չնայած քաղաքացու եւ պետության փոխհարաբերությունների նման մոդելի կենսագործման առավել նախընտրելի պայման է համարվում ժողովրդավարությունը, այնուամենայնիվ նեոպահպանողականության տեսաբաններից շատերը (Դ.Բել, Զ.Բժեզինսկի, Ն.Քրիստոլ եւ ուրիշներ) իրենց ուշադրությունը բեւեռել էին քաղաքականության մեջ քաղաքացիների ներգրավվածության սահմանափակմանը, պետության «սոցիալական ծանրաբեռնվածության» թուլացմանը, էլիտայի պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանը: Ընդ որում, նեոպահպանողականության ամերիկյան տարբերակներում հիմնական շեշտը, որպես կանոն, դրվում էր պետականության կատարելագործման ուղիների հայթայթման, իսկ արեւմտաեվրոպական հոսանքներում՝ հասարակության բարոյական ավանդույթների զարգացման եւ անհատի սոցիալական ակտիվության խրախուսման վրա: Սակայն նեոպահպանողականության բոլոր դրսեւորումների համար ընդհանուրն այն է, որ կարողանում է իրականության նկատմամբ ռացիոնալիստական մոտեցումը զուգակցել բարոյական սկզբունքների հետ, եւ առաջ է քաշում սոցիալապես պատասխանատու անհատի եւ քաղաքականապես կայուն պետության փոխհարաբերությունների պարզ բանաձեւը:

Տնտեսական ոլորտում նեոպահպանողականները հանդես եկան

որպես ազատ շուկայի եւ մրցակցության կողմնակիցներ, անհատական ձեռներեցության եւ պետության միջամտության սահմանափակման օգտին: Նման գաղափարներն, իրենց բովանդակությամբ, համարվում են մաքուր լիբերալ: Սակայն, հանդես գալով ազատ շուկայի օգտին, նեոպահպանողականները կտրականապես դեմ են նման հարաբերությունների փոխանցմանը քաղաքական ոլորտ: Այդ պատճառով նրանք մի կողմից լիբերալիզմի ժառանգորդներ են, իսկ մյուս կողմից՝ դրա հակառակորդներ: Տնտեսական եւ սոցիալական ոլորտներում պետության միջամտության մերժումը նեոպահպանողականների կողմից հիմնավորվում է ոչ լիբերալ մեթոդներով: Նրանց կարծիքով, պետության նման միջամտությունը խախտում է հետեւյալ ավանդական սկզբունքը՝ յուրաքանչյուր մարդ հույսը պետք է դնի սեփական կարողությունների վրա: Այդ միջամտությունը հյուծում է հասարակությունը, խարխլում նրա ավանդական սոցիալական ինստիտուտները (ընտանիք, համայնք, եկեղեցի):

Գործնականում նեոպահպանողականների քաղաքականությունն ուղղված է պետական ապարատի աշխատակիցների թվի կրճատմանը, կառավարման այն մեթոդների արմատավորմանը, որոնք իրենց արդյունավետությունը ցույց են տվել մասնավոր սեկտորում, մանր բիզնեսի խրախուսմանը, բաժնետիրական ընկերությունների շահույթների բաշխման գործում ընդգրկված մարդկանց շրջանակի ընդլայնմանը, սեփականության ապապետականացմանը եւ այլն:

Նեոպահպանողականների քաղաքական հայացքների համակարգը հենվում է հետեւյալ դրույթների վրա. անհատի ենթարկում պետությանը, ազգի քաղաքական եւ հոգեւոր ընդունակության ապահովում, պատրաստակամություն՝ հակառակորդի նկատմամբ դիմելու ամենաարմատական միջոցների:

Նեոպահպանողականների տեսական համակարգում մեծ տեղ է գրավում իշխանության հիմնահարցը, որը հարկավոր է կարգ ու կանոնի հաստատման համար: Տվյալ դեպքում, իշխանությունն առանձին անհատի կամ մարդկանց խմբի հնարավորությունն է՝ արձագանքելու հասարակական տարբեր իրադրություններին եւ ունակությունը՝ դրանց զարգացման վրա ներազդելու:

Նեոպահպանողականությունը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում նաեւ իշխանությունների տարանջատման հարցին: Նեոպահպանողականների կարծիքով, արդի առաջնային պրոբլեմներից է ոչ թե պետական իշխանության երեք ճյուղերի միջեւ օպտիմալ փոխհարաբերությունների հաստատումը, այլ իշխանության բաժանումը պետության, տնտեսության եւ ՁԼՄ-ի միջեւ:

Նեոպահպանողականները գտնում են, որ ԶԼՄ-ի կողմից հասարակական կարծիքը մանիպուլյացիայի ենթարկելու հնարավորության պայմաններում չի կարելի բացարձակացնել մեծամասնության կամքը: Լիբերալների «ներկայացուցչական ժողովրդավարությանը», որը որոշակի պատմական պայմաններում հանդիսացավ որպես ձախերի նոր քաղաքական կուլտուրայի արտահայտություն, նեոպահպանողականները հակադրեցին «ընտրանիների (էլիտաների) ժողովրդավարական տիրապետության կոնցեպցիան»: Ըստ նրանց, այն պայմաններում, երբ պահանջվում է ակտիվ եւ հստակ քաղաքականության իրականացում, միայն էլիտար կամ սահմանափակ ժողովրդավարությունը կարող է առավել արդյունավետ կարգավորել հասարակական կյանքը:

Նեոպահպանողականության տեսաբանները «ընտրանի» հասկացությունը դիտում են որպես «բարձր որակավորում ունեցող փոքրամասնություն» եւ ամենեւին էլ պարտադիր չեն համարում, որ այն իր մեջ ընդգրկի միայն իշխող դասակարգի վերնախավը: Ընտրանին, ըստ իրենց, ձեւավորվում է առանձին անհատների բացառիկ ունակությունների («անհատական խարիզմայի») դրսեւորման հետեւանքով: Ուստի, ընտրանին իր մեջ ընդգրկում է տվյալ հասարակության առավել առողջ ուժերին:

Ըստ նեոպահպանողականների, հասարակության մեջ արարիչ դեր խաղացող ընտրանին որոշակի ուղղություն է տալիս նաեւ ընդհանրապես պատմության զարգացմանը: Ժողովուրդների պատմությունը նեոպահպանողականները դիտում են որպես ընտրանիների պատմություն:

«Ընտրանիների ժողովրդավարական տիրապետության» տեսությունը վերանայում է նաեւ լիբերալիզմի *հավասարության, արդարության եւ եղբայրության* սկզբունքը, քանի որ դրա կիրառման բոլոր փորձերն ամբողջատիրության առաջացման վտանգ են պարունակում:

Ժողովրդավարության ընդարձակումը, նեոպահպանողականների կարծիքով, հանգեցնում է դարերի ընթացքում հղկված կապիտալիստական ինստիտուտների ապակայունացմանը: Հասարակության բոլոր անդամների ընդգրկվածությունը որոշումների ընդունման գործընթացում համարվում է ոչ միայն ուտոպիական, այլ նաեւ վնասակար:

# ԲԱԶՄԱԲԵՎԵՌ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ»

***Գագիկ Տեր-Հարությունյան***

***Անցումային փուլ.*** Առաջին «սառը պատերազմը» (ՍՊ)[1], որի գլխավոր դերակատարներն էին ԱՄՆ-ը եւ ԽՍՀՄ-ը, կոշտ հակամարտություն էր երկու գաղափարախոսական հայեցակարգերի եւ աշխարհաքաղաքական նախագծերի միջեւ: Ներկա ժամանակաշրջանում ընթանում է միաբեւեռ աշխարհակարգից բազմաբեւեռի անցում, եւ այդ «անցումային» փուլում զուգահեռաբար ընթանում են երկու գործընթացներ.

❖ Տեղի է ունենում այն հիմնական աշխարհաքաղաքական միավորների ռազմաքաղաքական, տնտեսական եւ գաղափարախոսական կայացումը, որոնք արդեն պայմանավորում են կամ մոտ ապագայում պետք է պայմանավորեն միջազգային հարաբերությունների բազմաբեւեռ տրամաբանությունը:

❖ Նվազում է Միացյալ Նահանգների գերակայությունը. այսօր ամերիկյան քաղաքական ընտրանին ընդունում է, որ իրենց գերհզոր տերությունն ի զորու չէ միայնակ ղեկավարել աշխարհը եւ արդեն մշակում է «կազմակերպված նահանջի» սցենարներ:

Վերոնշյալ իրողություններն ուրվագծում են միջազգային հարաբերությունների այն համակարգը, որում արդեն գործում է նոր կամ երկրորդ «սառը պատերազմի» տրամաբանությունը: Միեւնույն ժամանակ արձանագրենք, որ առաջին եւ ներկայումս ընթացող երկրորդ սառը պատերազմներն ունեն սկզբունքային տարբերություններ, որոնք եւ փորձենք համառոտ ներկայացնել:

---

[1] Նախկինում գրեթե բոլոր աղբյուրներում մատնանշվում էր, որ ՍՊ արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է ամերիկյան ձեռնարկատեր եւ քաղաքական գործիչ *Բեռնարդ Բարուխը* 1947թ. Սենատում ունեցած իր ելույթում: Սակայն վերջերս ԱՄՆ Պետդեպարտամենտին պատկանող կայքում զետեղված տեղեկության համաձայն, այդ եզրի հեղինակը անգլիացի տաղանդավոր գրող եւ հրապարակախոս *Ջորջ Օրուելլն* է, որն օգտագործել էր այդ բառակապակցությունը դեռեւս 1945թ. հոկտեմբերի 19-ի «Tribune»-ում հրապարակած իր հոդվածում, որից հետո այն մտավ տեղեկատվական շրջանառության մեջ:

***Քաղաքակրթական կամ ազգային բաղադրիչը.*** Առաջին ՍՊ-ն ունիվերսալ կոչվելու հավակնություններ ունեցող, երկու տրամագծորեն հակադիր տնտեսական-գաղափարախոսական մոդելների՝ «ազատական ժողովրդավարական» եւ «կոմունիստական-տոտալիտար», հակամարտություն էր: Ներկայումս պատկերն այլ է:

Կարող է թվալ, թե ԽՍՀՄ փլուզումից հետո գլոբալ հարթությունում գերակայում է ազատական տնտեսական մոդելը: Սակայն այդ մոդելը միանգամայն այլ բովանդակություն եւ ձեւ է ստանում տարբեր քաղաքակրթական գոտիներում ու առանձին երկրներում: Նույնը վերաբերում է նաեւ գաղափարախոսական հայեցակարգերին: Օրինակ, «մաքուր» կոմունիզմին հավատարիմ են մնացել Հյուսիսային Կորեան եւ որոշակի մոտավորությամբ՝ Կուբան, քանի որ անգամ Չինաստանը չի կարելի համարել սոցիալիստական երկիր. այդ տերությունը հրաժարվել է «դասակարգային պայքարի» եւ կոմունիստական գաղափարախոսության էությունը հանդիսացող այլ դրույթներից եւ կառուցում է «հարմոնիկ հանրություն»: Բացակայում է նաեւ «մաքուր» տոտալիտարիզմը. Արեւելքի «թագավորական տներին» կից գործում են պառլամենտներ եւ ժողովրդավարական այլ ինստիտուտներ: Միեւնույն ժամանակ, անհիմն է այսօր խոսել «հաղթած ունիվերսալ ժողովրդավարական մոդելի» մասին, քանի որ «ժողովրդավարություն» հասկացությունը տարբեր երկրներում ընկալվում եւ կիրառվում է հաճախ միանգամայն տարբեր ձեւով ու բովանդակությամբ: Այդ առումով հատկանշական է, որ անգամ «ունիվերսալ» ժողովրդավարության եւ ազատականության գլխավոր ջատագովները՝ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան, իրենց նախկին հակառակորդ կոմունիստական մոդելից փոխ են առել որոշ տոտալիտար բաղադրիչներ եւ, ի հավելումն, գաղափարախոսական ոլորտում որդեգրել են «ուլտրանացիոնալիստական» երանգներ:

***«Զսպման քաղաքականություն»-2.*** Ինչպես հայտնի է, ամերիկյան քաղաքականությունն առաջին ՍՊ-ի տարիներին առաջնորդվում էր «զսպման ռազմավարության» հայեցակարգով: Նման ռազմավարությունն արդարացված էր եւ ուներ օբյեկտիվ հիմնավորումներ: Երկրորդ աշխարհամարտում ԽՍՀՄ-ը բացարձակ ռազմական հաղթանակ էր նվաճել, եւ արդյունքում՝ ստեղծվել էր նախադեպը չունեցող, Պեկինից մինչեւ Բեռլին ձգվող «կոմունիստական գերկայսրություն»: Այդ կայսրությունն ուներ հարձակողական գաղափարախոսություն, պատերազմում թրծված հզոր զինված ուժեր եւ որպես ֆաշիզմին հաղթած երկիր՝ բարձր միջազգային հեղինակություն: Միեւնույն ժամանակ, ԽՍՀՄ քաղաքական

ղեկավարությունը բավարարված չէր պատերազմի արդյունքներից. համարվում էր, որ աշխարհաքաղաքական ձեռքբերումները կարող էին եւ ավելի մեծ լինել: Նման իրադրությունում միացյալ Արեւմուտքը եւ նրա առաջատար Միացյալ Նահանգները, պետք է համախմբեին իրենց ռեսուրսները նման գերկայսրության հավակնությունները զսպելու նպատակով եւ սկզբնական փուլում որպես «զսպման» հիմնական միջոց օգտագործվում էր միջուկային զենքը: Վերջինիս տիրապետումը ԱՄՆ-ի կողմից միակ հանգամանքն էր, որը զսպեց ԽՍՀՄ հարձակողական պլանները, օրինակ, Թուրքիայի նկատմամբ: Հետագայում միջուկային սպառազինության ոլորտում ստեղծված հավասարակշռությունը գործնականում բացառեց ԱՄՆ—ԽՍՀՄ անմիջական առճակատումը:

Ներկայումս պատկերը տրամագծորեն փոխվել է: Որպես հարձակողական, ռազմական խոշոր գերակայություն ունեցող տերություն հանդես է գալիս ԱՄՆ-ը: Այդ գերտերության քաղաքական ղեկավարությունը նույնպես չբավարարվեց առաջին ՍՊ-ում տարած իր բացարձակ հաղթանակով, որի արդյունքում գլոբալ հարթությունում հաստատվեց Միացյալ Նահանգների քաղաքական առաջատարությունը: 2001թ. սեպտեմբերի 11-ին սկսված «հակաահաբեկչական պատերազմը», Աֆղանստանի եւ Իրաքի դեմ կատարած հարձակումները հավակնում էին գլոբալ մակարդակով վերահսկողություն սահմանել հումքային եւ մարդկային ռեսուրսների վրա: Հատկանշական է, որ ամերիկյան էքսպանսիան զուգորդվում էր «ազգային պետություն» եւ «ինքնիշխանություն» հասկացությունների ժխտման քարոզչությամբ: Ներկայումս այլ քաղաքական դերակատարների ջանքերն ուղղված են «զսպելու» այդ գերտերության հավակնությունները եւ պահպանելու սեփական ինքնիշխանությունը (երբեմն՝ քաղաքակրթական մակարդակով). այսինքն՝ «զսպման քաղաքականությունն» այսօր վարվում է արդեն ԱՄՆ-ի դեմ: Կարելի է ամրագրել, որ *արդի սառը պատերազմում ԱՄՆ-ի դեմ վարվող «զսպման ռազմավարությունը», փաստորեն, պայքար է ազգային (քաղաքակրթական) ինքնիշխանության համար:*

Հատկանշական է, որ ինչպես եւ նախկինում, այսօր էլ միջուկային զենքը «զսպման» գլխավոր գործիքներից է: Համաձայն փորձագիտական հանրության մոտեցումների՝ դեռեւս ոչ վաղ անցյալում՝ իննսունական թվականներին, Ռուսաստանի միջուկային ներուժը միակ գործոնն էր, որը պահպանեց այդ տերության ինքնիշխանությունը: Այս կամ այն չափով նույն իմաստն ունեն Իրանի, Հյուսիսային Կորեայի եւ նրանց օրինակին հետեւել փորձող այլ երկրների (որոնց թիվն աճում է) միջուկային ծրագրերը:

Միեւնույն ժամանակ, «միջուկային զսպման» ներկա ռազմավարությունը, օրինակ՝ Իրանի կամ Հյուսիսային Կորեայի պարագայում, դեռեւս այն *«սիմետրիկ զսպման»* մեխանիզմը չէ, ինչը գործում էր ԱՄՆ—ԽՍՀՄ սպառազինությունների մրցավազքի դարաշրջանում: Այդ փուլում ենթադրվում էր, որ միջուկային բախման արդյունքում կողմերը ջախջախիչ հարվածներ եւ անվերականգնելի կորուստներ են հասցնելու միմյանց: Ներկայումս «նոր» միջուկային երկրների ռազմավարությունը կրում է *ասիմետրիկ* բնույթ եւ հենվում է «մասնակի հատուցման» հայեցակարգի վրա, որի հետեւանքով կարող են խոշոր կորուստներ եւ վնասներ կրել ԱՄՆ ռազմակայանները կամ դաշնակիցները, կամ՝ ուղղակի շրջակա միջավայրը:

***«Սպառազինությունների մրցավազքը».*** Առաջին ՍՊ-ի դարաշրջանը բնութագրող առանցքային հասկացություններից էր «սպառազինությունների մրցավազքը», որը Միացյալ Նահանգների եւ Խորհրդային Միության առաջնորդությամբ ընթանում էր «ազատ աշխարհի» եւ «սոցիալիստական ճամբարի» միջեւ: Կողմերի «ռազմական գործիքներն» էին երկու խոշոր դաշինքները՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը (ՆԱՏՕ) եւ Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը, որոնց ցամաքային «անմիջական շփման» գիծն անցնում էր Եվրոպայով եւ մասամբ՝ Հարավային Կովկասով:

Նման երկբեւեռ համակարգում «սպառազինությունների մրցավազքը» հիմնականում *սիմետրիկ* բնույթ էր կրում. ամերիկյան եւ խորհրդային զինված ուժերը տիրապետում էին գրեթե հավասար ներուժի: Այդ հավասարակշռության խախտումը որեւէ ոլորտում կողմերը հիվանդագին էին ընդունում եւ դրությունը շտկելու համար դիմում էին հնարավոր բոլոր միջոցների: Նման իրավիճակը ծանր էր անդրադառնում հատկապես խորհրդային տնտեսության վրա, որը զգալիորեն զիջում էր արեւմտյանին. համարվում է, որ ԽՍՀՄ փլուզման տնտեսական պատճառներից մեկը «սպառազինությունների մրցավազքն» էր: Ավելին. միանգամայն հիմնավոր է այն վարկածը, թե նման մրցավազքը ԱՄՆ կողմից կիրառվող ռազմավարություն էր, որը պարտադրվում էր «սովետներին»՝ նրանց ուժասպառ անելու նպատակով:

Ներկայիս ժամանակաշրջանին բնորոշ չեն նաեւ հակամարտող ռազմաքաղաքական դաշինքները: ՆԱՏՕ-ին այսօր հատուկ է որոշակի ներքին «քաղաքական անջատողականություն»՝ պայմանավորված հյուսիսատլանտյան եւ եվրակենտրոն գաղափարախոսությունների հակասություններով: Կարելի է արձանագրել, որ ՆԱՏՕ-ն այլեւս չի ընկալվում

որպես Եվրոպան պաշտպանելու առաքելություն կատարող կազմակերպություն եւ այսօր ավելի շատ, քան նախկինում, սպասարկում է ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի շահերը: Սակայն, բոլոր պարագաներում, ՆԱՏՕ-ն չունի հավասարազոր մրցակիցներ եւ գերակայում է ռազմական հարթությունում: Այդ ոլորտում անհամեմատ ավելի համեստ դիրքեր է գրավում նախկին խորհրդային հանրապետություններից մի քանիսը ներառող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, իսկ զարգացման մեծ հեռանկարներ ունեցող Շանհայի համագործակցության կազմակերպությունը՝ որպես ռազմական դաշինք, դեռ չի ձեւավորվել:

Նույն պատկերն է նաեւ նախկին գլխավոր հակառակորդների պարագայում: Միացյալ Նահանգները ռազմական ոլորտում էապես գերազանցում է Ռուսաստանին եւ Չինաստանին ոչ միայն առանձին, այլեւ միասին վերցրած. ԱՄՆ ռազմական բյուջեն կազմում է աշխարհում կատարվող ռազմական ծախսերի գրեթե կեսը, իսկ ամերիկյան զինված ուժերը ռազմական տեխնիկայի եւ ռազմարվեստի ոլորտներում չունեն իրենց հավասարը:

Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ անգամ բացարձակ ռազմական գերազանցությունը չի կարող երաշխավորել ԱՄՆ գաղափարախոսական, քաղաքական եւ տնտեսական գերակայությունն աշխարհում: Դրա ցայտուն օրինակն է այն, ինչ տեղի է ունենում Իրաքում եւ ինչ, թերեւս, տեղի կունենա Աֆղանստանում. այս կամ այն երկրի ռազմական օկուպացիան դեռեւս չի նշանակում լիարժեք վերահսկում այնտեղ ընթացող գործընթացների վրա:

Պետք է ընդունել, որ ամերիկյան ռազմավարությունը, չնայած շարունակաբար կատարելագործվում ու ենթարկվում է բարեփոխումների, ինչ-որ առումով արխայիկ բնույթ է կրում: Թվում է, թե ամերիկյան քաղաքականություն մշակողները դեռեւս գտնվում են առաջին ՍՊ-ում տարած հաղթանակի տպավորության տակ եւ վերարտադրում են արդեն պատմություն դարձած ժամանակաշրջանի մոտեցումը, երբ առաջնահերթ եւ որոշիչ խնդիրը ռազմական գերակայությունն էր: Նման պնդումը չի նշանակում, թե ռազմական ներուժը վերածվել է երկրորդական գործոնի: Դա ընդամենը վկայում է այն մասին, որ արդի քաղաքականության տրամաբանությունը զգալի փոփոխություններ է կրել եւ այսօր, առավել քան նախկինում, կարեւորագույն նշանակություն է ձեռք բերել քաղաքակրթական, գաղափարախոսական, սոցիալական, տնտեսական եւ բնական՝ հատկապես էներգետիկ ռեսուրսների տիրապետումը: Ելնելով այդ իրողությունից՝ *երկրորդ ՍՊ-ի դերակատարները հիմնավորված*

*կերպով խուսափում են անհեռանկարային դասական սպառազինությունների մրցավազքից՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով իրենց ինքնիշխանությունն ապահովող ոչ միայն ռազմական, այլեւ տարաբնույթ այլ ռեսուրսների զարգացման վրա:*

Նման իրադրությունը պայմանավորում է այսօրվա մրցակցության *ասիմետրիկ* բնույթը, քանի որ աշխարհաքաղաքական դերակատարները միմյանց դեմ կիրառում են տարբեր որակի «սպառազինություններ» (եթե պայմանականորեն այդպես անվանենք վերոնշյալ ռեսուրսները):

***Նոր «սառը պատերազմ»-ի դերակատարները.*** Չնայած այլընտրանքային ռազմաքաղաքական դաշինքների բացակայությանը, այսօր ուրվագծվում են այն աշխարհաքաղաքական-քաղաքակրթական միավորները, որոնք մտահոգված լինելով իրենց ինքնիշխանության պահպանման խնդիրներով՝ միեւնույն ժամանակ ունեն անհրաժեշտ ռեսուրսներ եւ քաղաքական կամք (ինչը նույնպես կարեւորագույն ռեսուրս է) ամերիկյան էքսպանսիային դիմակայելու համար: Գլոբալ հարթությունում նման միավորների կարգավիճակ ունեն Չինաստանը եւ Ռուսաստանը, Իսլամական աշխարհը եւ վերապահումներով՝ մայրցամաքային Եվրոպան ու լատինամերիկյան որոշ երկրների համախումբը:

Պետք է արձանագրել, որ սկզբնական փուլում այդ դերակատարների դիմադրությունն ամերիկյան ազդեցությանը կրում էր ավելի շուտ «քաղաքացիական անհնազանդության» տեսք: Սակայն սեփական «կայացմանը» զուգահեռ, նրանց հարաբերություններն ԱՄՆ-ի հետ (իսկ որոշակի ոլորտներում՝ նաեւ միմյանց նկատմամբ) աստիճանաբար նմանվում են նրան, ինչը գոյություն ուներ առաջին ՍՊ-ի տարիներին, այսինքն՝ ընթանում են.

- քաղաքական-դիվանագիտական ակտիվ խուսանավումներ,
- տնտեսական սուր մրցակցություն,
- տեղեկատվական-քարոզչական (երբեմն քաղաքակրթական մակարդակով) պատերազմներ,
- միջամտությունը մրցակցի ներքաղաքական խնդիրներին,
- կոշտ, ուժային պայքար հատուկ ծառայությունների ոլորտում,
- անուղղակի ռազմական առճակատում այսպես կոչված «լոկալ» կամ «փոքր ինտենսիվության» պատերազմներում, որոնց շարքին են դասվում հակամարտությունները Մերձավոր եւ Միջին Արեւելքում:

Վերոնշյալի համատեքստում, խիստ հետաքրքրական է ԱՄՆ—ՉԺՀ սկզբունքային եւ ռազմավարական բնույթ կրող մրցակցությունը, քանի որ «սեղանին է դրված» քաղաքական եւ տնտեսական առաջատարության խնդիրը ոչ միայն Հարավարեւելյան Ասիայի տարածաշրջանում, այլեւ գլոբալ հարթությունում: Հատկանշական է, որ այդ տերությունների հարաբերությունները, չնայած իրենց «սառըպատերազմյան բնույթին» ամենականոնակարգվածն են: Դրանք ինչ-որ առումով հիշեցնում են ԱՄՆ—ԽՍՀՄ հարաբերությունները նախորդ դարի 70-ականներին, երբ վերջիններիս ռազմական հնարավորությունները հավասարակշռված էին: Նման իրավիճակը պայմանավորված է հետեւյալով. չնայած նրան, որ ռազմական ներուժի եւ ՀՆԱ պարամետրերով Չինաստանը զգալիորեն զիջում է ԱՄՆ-ին, սակայն տիրապետում է հսկայական արդյունաբերական եւ մարդկային ռեսուրսների, իսկ նրա պետական եւ հասարակական համակարգն առաջնորդվում է հստակ գաղափարախոսությամբ: Այդ առումով ՉԺՀ-ն նույնպես գերտերություն է, այն կարողանում է արդյունավետ եւ *ասիմետրիկ* մրցակցել Միացյալ Նահանգների հետ:

Ուժերի *ասիմետրիկ* հավասարակշռությունն արդեն բնորոշ է նաեւ ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններին: Վերջինիս ՀՆԱ-ն բազմապատիկ զիջում է ամերիկյանին, սակայն միջուկային ուժերի հարաբերական պարիտետով, իր հսկայական տարածքով, ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների պաշարներով՝ այդ տերությունը նույնպես հանդիսանում է խոշոր աշխարհաքաղաքական դերակատար: Հատկանշական է, որ Ռուսաստանի բնական ռեսուրսները բավարար դարձան նոր ՍՊ-ի դերակատար լինելու համար՝ միայն պետական համակարգի վերականգնումից եւ ուրույն գաղափարախոսական դրույթներ ձեւավորելուց հետո (մինչ այդ Ռուսաստանի դերակատարումը սահմանափակվում էր սեփական ինքնիշխանությունը պահպանելու հարցերով):

Այսօր ռուս-ամերիկյան մրցակցությունը, որը հենվում է առաջին ՍՊ-ի ավանդույթների վրա, ընթանում է հետխորհրդային տարածքի վրա վերահսկողություն սահմանելու շուրջ եւ էներգետիկ խնդիրների ոլորտում: Զուգահեռաբար զարգանում են Մոսկվա—Բեռլին—Փարիզ, Մոսկվա—Թեհրան, Մոսկվա—Պեկին հարաբերությունները, ինչը կարող է բերել պայմանավորվածությունների ռազմավարական մակարդակում:

Թերեւս, ամենադրամատիկը զարգանում են ԱՄՆ—Իսլամական աշխարհ հարաբերությունները, որոնք ընթանում են հակաահաբեկչական պատերազմի մոտիվներով: Սակայն այդ ոլորտում առաջին պլան են մղվել ոչ այնքան ահաբեկչական կազմակերպությունները, որոնց

գործունեությունն Իրաքում ստիպում է ամերիկացիներին նահանջել, որքան Իրանը: Այդ տարածաշրջանային տերությունը, ունենալով քաղաքակրթական ավանդույթներ, ազգային-կրոնական գաղափարախոսություն եւ էներգետիկ ռեսուրսներ, արագորեն վերափոխվում է «ասիմետրիկ» գործող գլոբալ նշանակության դերակատարի: ԱՄՆ—Իրան սառը պատերազմը մղվում է գլխավորապես գաղափարախոսական եւ աշխարհատնտեսական հարթություններում:

Արդի աշխարհում յուրահատուկ դիրք է գրավում մայրցամաքային Եվրոպան, որի առաջատարներ Գերմանիան եւ Ֆրանսիան առաջին ՍՊ-ի ավարտից հետո փորձում են դուրս գալ ամերիկյան ազդեցության գոտուց եւ վարել ինքնուրույն քաղաքականություն: Հյուսիսատլանտյան եւ եվրակենտրոն աշխարհաքաղաքական հայեցակարգերին բնորոշ հակասությունները հանգեցնում են նրան, որ ԱՄՆ—Եվրոպա հարաբերություններում արդեն նշմարվում են «սառըպատերազմյան» նախանշաններ, որոնք իրենց զգալ են տալիս տեղեկատվական եւ տնտեսական հարթություններում:

Այսօր ուշադրության կենտրոնում են նաեւ Լատինական Ամերիկայում ընթացող գործընթացները, որոնց պատմական արմատները տանում են իսպանական եւ անգլոսաքսոնյան քաղաքակրթությունների հակամարտությունն ու լատինաամերիկյան հոգեկերտվածքին բնորոշ ազգային-ազատագրական, իսկ հետագայում՝ «ձախ» կողմնորոշում ունեցող շարժումները: «Լատինաամերիկյան» սառը պատերազմն ընթանում է ԱՄՆ առաջին «կայսերական» հայեցակարգի՝ Մոնրոյի դոկտրինի համատեքստում: Որպես նոր երանգ կարելի է համարել նախկին քաղաքակրթական մրցակցության յուրահատուկ վերափոխումը եւ տեղափոխումը բուն Միացյալ Նահանգներ, որտեղ անգլիալեզու եւ իսպանալեզու հատվածների առկայությունը վերաճում է ժողովրդագրական լուրջ հիմնախնդրի. տեսանելի ապագայում «լատինոսները» կարող են մեծամասնություն կազմել ԱՄՆ-ում, ինչը նույնպես կարելի է դիտարկել որպես *ասիմետրիկ* մարտահրավեր այդ տերությանը:

***Հետեւություն.*** Արդի սառը պատերազմն իր նախնական փուլում է: ԱՄՆ հավաքական ռեսուրսների հարաբերական նվազմանը եւ նրա մրցակիցների հզորացմանը զուգահեռ՝ այդ «սառը» հակամարտությունը սաստկանալու միտումներ է ցուցաբերում: Միեւնույն ժամանակ, բազմաբեւեռ համակարգի լիարժեք ձեւավորումը կարող է հանգեցնել այսօր ԱՄՆ-ի դեմ պայքարում համագործակցող դերակատարների շահերի բախմանը:

Հաշվի առնելով միջուկային զենքի տիրապետումը տարբեր երկրների կողմից՝ նման իրադրության վերահսկումը եւ «լիցքաթափման» ռազմավարության իրագործումը, ինչպես դա կատարվեց առաջին ՍՊ-ի դարաշրջանում, անհամեմատ ավելի բարդ է լինելու: Այս ամենը ստիպելու է հիմնական դերակատարներին վերիմաստավորել «կոլեկտիվ անվտանգության» վերաբերյալ տարածաշրջանային թեզերը՝ փորձելով այդ հասկացությունները «հարմարեցնել» միջազգային արդի հարաբերություններին: Սակայն այսօր քաղաքական-փորձագիտական հանրությունը, կարծես, դեռեւս գտնվում է «սցենարային» մտածելակերպի ստերեոտիպերի շրջանակներում, մինչդեռ նման մեթոդաբանությունը չի կարող արդյունավետ լինել սպասվող իրողություններում:

# ՆԱՏՕ-Ի ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ

***Սուրեն Սարյան***

Տասնամյակներ շարունակ ՆԱՏՕ-ն եղել եւ շարունակում է մնալ առավել հաջողակ ռազմաքաղաքական դաշինքը նորագույն պատմության մեջ: Բացի այդ, այսօրվա Եվրոպայում այն անվտանգության միակ գործուն մեխանիզմն է, որը, սակայն, մտել է վճռական վերափոխման փուլ:

Այս առումով նոյեմբերի 28-29-ին Ռիգայում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովը կարելի է բնութագրել որպես շատ զգուշավոր. որեւէ արմատական որոշում չկայացվեց: ՆԱՏՕ-ի ղեկավարներն ընդունեցին 46 կետից բաղկացած մի հռչակագիր, որտեղ խոսվում է դաշինքի տրանսֆորմացման եւ 21-րդ դարի մարտահրավերների համարժեք պատասխանների մասին:

Մինչեւ 1990-ականները ՆԱՏՕ-ն ներկայացնում էր Հյուսիսային Ամերիկայի եւ Արեւմտյան Եվրոպայի պետությունների դասական ռազմաքաղաքական պաշտպանական դաշինք, որն ուներ մեկ հստակ հակառակորդ՝ ի դեմս ԽՍՀՄ-ի եւ նրա շուրջ հավաքված Վարշավյան պայմանագրի երկրների: Ստեղծված լինելով Խորհրդային Միությանը դիմակայելու համար՝ ՆԱՏՕ-ն չդադարեց գոյություն ունենալ ԽՍՀՄ-ի քայքայումից եւ Վարշավյան պայմանագրի ցրվելուց հետո: Համաձայն իր Ռազմավարական հայեցակարգի, որն ընդունվել էր դեռեւս 1999-ին, ՆԱՏՕ-ն պետք է լինի եվրաատլանտյան անվտանգության համակարգի կենտրոնական հենասյունը՝ հետապնդելով «Եվրոպան ազատ եւ ամբողջական» դարձնելու ռազմավարությունը, որը վերահաստատվեց նաեւ Ռիգայի գագաթաժողովի ժամանակ:

1990-ականներին տեղի ունեցավ դաշինքի վերափոխումը, երբ այն իրականացրեց ռազմական միջամտություններ Բալկաններում՝ ներկայանալով որպես ուժ, որն անհրաժեշտության դեպքում ունակ է ռազմական միջոցներով կարգ ու կանոն հաստատել Եվրոպայում: Աֆղանստանի գործողությամբ եւ այսօրվա քայլերով ընթանում է ՆԱՏՕ-ի տրանսֆորմացիայի երրորդ փուլը՝ գլոբալացումը:

Փաստորեն, այսօր ՆԱՏՕ-ի պատասխանատվության գոտի է դարձել ամբողջ աշխարհը: Եվ եթե առաջ դաշինքի առջեւ ծառացած վտանգը գտնվում էր Արեւմտյան Բեռլինի սահմանակետի դիմաց, որտեղ կանգնած էին խորհրդային տանկերը, իսկ նրանց հետեւում՝

վիթխարի բանակներ, ապա այսօրվա վտանգները գտնվում են ՆԱՏՕ-ի տարածքից հեռու, սակայն այդ վտանգներն ամենուր են եւ կարող են աննկատորեն ներս թափանցել եվրաատլանտյան աշխարհ: Հիմա ՆԱՏՕ-ն պետք է սովորի կռվել ոչ թե Կարմիր բանակի նման հսկայի, այլ *Թալիբանի* եւ *Հիզբալլահի* նման «գաճաճների» դեմ, որոնք արագաշարժ եւ անճանաչելի են, որոնց մարտիկները չեն կրում զինվորական համազգեստ եւ, ի տարբերություն ամերիկացի, եվրոպացի կամ ռուս զինվորների, պատրաստ են իրենց հազարներով զոհաբերել:

Ըստ այդմ էլ պետք է իրականացվի ՆԱՏՕ-ի ծավալուն ու այսօր այլեւս քիչ արդյունավետ կառուցվածքի արդիականացումը, որի ընթացքում այն պետք է փոխարինվի ավելի ճկուն, արագ ծավալման ու արձագանքման պատրաստ կառույցներով: Եվ Ռիգայի գագաթաժողովի կարեւոր արդյունքներից էր հենց ՆԱՏՕ-ի արագ արձագանքման 25 հազարանոց ուժերի ստեղծման վերաբերյալ որոշումը, որոնք ունակ կլինեն ծավալվել աշխարհի ցանկացած կետում՝ լուրջ ճգնաժամերի առաջացման դեպքում:

Բացի այդ, Միացյալ Նահանգներն առաջարկեցին խթանել դաշինքի կապերը Ճապոնիայի, Հարավային Կորեայի եւ Ավստրալիայի նման երկրների հետ՝ պնդելով, որ Արեւմուտքը շատ ավելի գաղափար է, քան թե աշխարհագրական հասկացություն: Սակայն «գլոբալ ՆԱՏՕ-ի» առաջարկը Ռիգայի գագաթաժողովի փաստաթղթերում տեղ չգտավ:

Մինչդեռ ՆԱՏՕ-ի տրանսֆորմացման ջատագովները կոչ են անում վերածել այն զուտ եվրոպական կամ եվրաատլանտյան պաշտպանական դաշինքից անվտանգության գլոբալ դաշինքի, որը պատրաստ կլինի պաշտպանել իր անդամ երկրների շահերը՝ որտեղ էլ դրանք վտանգի ենթարկվեն, եւ որը պատրաստ կլինի գործել ճկուն եւ կամավոր կոալիցիաների տեսքով: Այս նախագիծը ենթադրում է, որ ԵՄ-ը պետք է արդեն իր վրա վերցնի ՆԱՏՕ-ի գործառույթները Եվրոպայում, իսկ ինքը՝ Հյուսիսատլանտյան դաշինքը, վերջնականապես դառնա գլոբալ ուժ՝ գլոբալ առաքելություններով, ներառյալ ինչպես ռազմական գործողությունների վարումը, այնպես էլ խաղաղարար ու խաղաղապահ առաքելությունները: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաափ Հուփ Սխեֆերն արդեն հանդես է եկել ՆԱՏՕ-ն *«գլոբալ գործընկերների միավորման վերածելու»* նախաձեռնությամբ:

Սակայն գործընկերությունը նույն բանը չէ, ինչ որ դաշինքը: Տվյալ դեպքում «գլոբալ գործընկերությունը» ոչ թե ինքնանպատակ է, այլ առաջին քայլ՝ դեպի պաշտոնական անդամակցություն: Նման փորձ դաշինքն արդեն ունի, երբ 1990-ականներին Արեւելյան Եվրոպայի երկրների համար առաջ քաշվեց «Գործընկերություն հանուն խաղաղու-

թյան» ծրագիրը, երբ այդ երկրներն ընդգրկվեցին ՆԱՏՕ-ի զորավարժությունների եւ խաղաղարար առաքելությունների մեջ, իսկ հետո իրար հետեւից դարձան դաշինքի անդամ: «Գլոբալ գործընկերության» տարբերակը փաստորեն պետք է նախապատրաստի դաշինքի անցումը տրանսատլանտյանից դեպի գլոբալ մոդել: Այդ գաղափարի ջատագովները պնդում են, թե քանի որ ՆԱՏՕ-ի մարտահրավերներն այսօր գլոբալ են, ապա պետք է գլոբալ դառնա նաեւ նրա անդամակցությունը:

Հարցի նման լուծումը չափազանց նախընտրելի է ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների համար, որոնց բանակները գնալով ավելի սուր են զգում մարդկային ռեսուրսի պակասը: Ներկայիս ժողովրդագրական միտումների պահպանման դեպքում, քսան-երեսուն տարի հետո ՆԱՏՕ-ի եվրոպական զորախմբերում պարզապես չեն լինի զինծառայողներ: Իսկ Բրազիլիայի, Հարավային Կորեայի, Իսրայելի կամ Ավստրալիայի նման դաշնակիցները, որոնց բանակները բավականին արհեստավարժ են, կարող են օգնել՝ բարելավելու իրավիճակը:

ՆԱՏՕ-ի այդ տրանսֆորմացիան հաստատում է նաեւ Ռիգայի գագաթաժողովի ընթացքում Զբիգնեւ Բժեզինսկու կողմից արված եզրակացությունը, որ *«այլեւս ՆԱՏՕ-ի ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ թե նրա անդամների ազգային զինված ուժերի ինտեգրմանը, քանի որ տարածքային սկզբունքով իրականացվող պաշտպանությունը գրեթե կորցրել է իր սկզբնական նշանակությունը, այլ արագ արձագանքման ուժերի ստեղծմանը, որոնք թույլ կտային իրականացնել դաշինքի առաքելությունները նրա անդամ երկրների սահմաններից դուրս»:*

Սակայն չի կարելի ասել, թե «գլոբալ ՆԱՏՕ-ի» գաղափարը վայելում է լայն աջակցություն: Մասնավորապես, ֆրանսիական տեսակետն այն է, որ ՆԱՏՕ-ն մնա եվրաատլանտյան տարածաշրջանում կենտրոնացած անվտանգության դաշինք: Ինչպես նշել է Ֆրանսիայի պաշտպանության նախարար Միշել Ալիո-Մարին, *«գլոբալ գործընկերության զարգացումը կարող է լղոզել եվրոպացիների եւ հյուսիսամերիկացիների միջեւ բնական համերաշխությունը մի անորոշ իրողության մեջ»:*

Իրոք, նման բարդություններ «գլոբալ ՆԱՏՕ-ի» ստեղծման գործում առկա են: Ինչքանո՞վ կուզենան նրա մեջ ընդգրկվել Ճապոնիան կամ Ավստրալիան, որոնք պետք է ապրեն Չինաստանի կողքին: Կամ՝ արդյո՞ք Հնդկաստանը չի մոռանա հնարավոր «գլոբալ ՆԱՏՕ-ում» իր դաշնակիցներին, եթե, ասենք, Պեկինը նրան առաջարկի շատ ավելի շահութաբեր գործարքներ:

Բացի այդ, ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների մոտ, բացի Մեծ Բրիտանիայից եւ Ֆրանսիայից, չկան կարողություններ եվրաատլանտյան

պատասխանատվության գոտուց դուրս առաքելություններ իրականացնելու համար, ինչի լավ օրինակ ծառայեցին Ռիգայի գագաթաժողովում Աֆղանստանի հարցում դաշնակիցների միջեւ ի հայտ եկած տարաձայնությունները. մի մասը՝ ի դեմս ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Բուլղարիայի, հանդես եկավ խաղաղապահ զորախմբի թվաքանակի ավելացման օգտին, մինչդեռ Ֆրանսիան եւ Գերմանիան այնքան էլ տրամադրված չէին ավելացնել իրենց զորամիավորումները կամ տեղափոխել դրանք համեմատաբար հանգիստ աֆղանական հյուսիսից դեպի *Թալիբանի* ջոկատներով սփռված հարավ:

Այստեղ կրկին իր արտահայտումը գտավ տրանսատլանտյան խզումը, որի մասին Հենրի Քիսինջերը մի քանի տարի առաջ ասել է, որ *«Ամերիկան եւ Եվրոպան հեռացել են իրարից եւ այժմ պետք է վերգտնեն ընդհանուր ճակատագրի իրենց ընկալումը»:*

Արդեն 2002թ., երբ հրապարակվեցին ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ռազմավարությունը եւ ԵՄ-ի Անվտանգության ռազմավարությունը, ակնհայտ դարձավ Ատլանտյան օվկիանոսի երկու ափերին առկա մոտեցումների միջեւ տարբերությունները: Եթե Միացյալ Նահանգները շեշտը դնում են կանխարգելման եւ գերիշխանության սկզբունքների վրա, ապա եվրոպական ստրատեգիան ելնում է այն դրույթներից, որ պետությունների միջամտությունը միմյանց ներքին գործերին մեծացել է, պետական սահմանները ձեռք են բերել չափազանց հարաբերական բնույթ, իսկ ուժի կիրառումը պետք է մերժվի որպես վեճերի լուծման միջոց: Եվ եթե ԱՄՆ-ն ու ԵՄ-ը համամիտ են նոր գլոբալ սպառնալիքների հարցում՝ ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի տարածում եւ այլն, ապա հակադրվում են այն հարցում, թե ինչպես է պետք դիմակայել դրանց:

Իրաքի պատերազմի ընթացքում եւ դրան հաջորդած զարգացումներում ՆԱՏՕ-ի դաշնակիցների միջեւ այդ տարաձայնություններն ավելի ակնհայտ դարձան: Ամերիկացիներն այսօր վարում են իրենց պատերազմներն ինքնուրույն եւ լուրջ մարտական գործողություններ վարելու համար դժվար թե այլեւս ՆԱՏՕ-ի կարիքն ունենան՝ հետեւելով արդեն նախկին պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդի ձեւակերպմանը. *«առաքելությունն է որոշում դաշնակիցներին»:*

Նմանապես, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան չեն դիտում ՆԱՏՕ-ն որպես իրենց համար առանցքային ռազմական կազմակերպություն՝ ապավինելով գերազանցապես սեփական զինված ուժերին: Ֆրանսիան ընդհանրապես բոլորից քիչ է շահագրգռված եղել ատլանտյան դաշինքի մեջ՝ տեսնելով նրանում Եվրոպայի «ֆրանսիական նախագիծը» խաթարող ամերիկյան լծակ: Այդ պատճառով էլ Փարիզն անընդհատ զարկ էր

տալիս եվրոպական անվտանգության եւ պաշտպանության ինքնուրույն ուժերի ձեւավորման գործին:

Ուստի, պարզ է, թե ինչու Միացյալ Նահանգներն այնքան էլ չի ապավինում ՆԱՏՕ-ի ռազմական մեքենային: Եվ այդ է պատճառը, որ ՆԱՏՕ-ի ինքնությունն այսօր ավելի քաղաքական է, քան ռազմական: Սակայն այն չի դադարի լինել ուժեղ ռազմական միավորում, քանի որ քաղաքական որոշումների ռազմական ապահովման կարողությունն է պայմանավորում ՆԱՏՕ-ի հեղինակությունն ու կշիռը: Առանց ռազմական հզորության ՆԱՏՕ-ն կկորցնի նաեւ իր քաղաքական նշանակությունը, իսկ այն երաշխիքները, որոնք նա տրամադրում է իր անդամ երկրներին, պարզապես դատարկ խոսքի կվերածվեն:

Գոյություն ունեն նաեւ ավելի խորքային պատճառներ, որոնք չեն հանգեցնի տրանսատլանտյան բաժանմանը: Եվրոպան երեք կողմից շրջապատված է բավական անկայուն տարածաշրջաններով, որոնք ընդգրկված են այսօր ԵՄ-ի «մերձավոր հարեւանության» մեջ՝ Հյուսիսային Աֆրիկան, Մերձավոր Արեւելքը եւ նախկին հետխորհրդային տարածքը: Եվ հենց այդ տարածության համար է Եվրոպան հանդիսանում այսօր խոշոր քաղաքական եւ տնտեսական մագնիս, որի ազդեցությունը հարեւանների վրա չափազանց մեծ է: Այդ պատճառով ներկայիս Եվրոպայի արտաքին քաղաքականությունը կայանում է ընդլայնման մեջ, իսկ այդ քաղաքականության առավել արդյունավետ գործիքը «անդամակցության գայթակղումն» է: Սակայն եվրոպական քաղաքակրթության եւ քաղաքականության հաջող տարածման համար անհրաժեշտ են ստրատեգիական նպաստավոր պայմաններ, որոնք այսօր ապահովում է հենց Միացյալ Նահանգները: Այսինքն՝ ստեղծվում է մի վիճակ, երբ ամերիկյան «ռազմական մկանները» մաքրում են ճանապարհը Եվրոպայի համար: Եվ քանի որ Եվրոպան չունի խոշորածավալ ռազմական կարողություններ, որոնք կարող էին ապահովել նրա գլոբալ դերակատարությունը, ապա հենց ՆԱՏՕ-ն պետք է տրամադրի դրանք ԵՄ-ին:

Իսկապես, 1990-ականներին Բալկաններում, երբ Եվրոպան քաղաքականապես անկարող էր կոտրել Սլոբոդան Միլոշեւիչի վարչակարգը, գործի դրվեցին ՆԱՏՕ-ի ուժերը՝ ԱՄՆ-ի ղեկավարությամբ: Այսօր ամերիկացիները գրեթե լիովին հեռացել են Բալկաններից՝ հանձնելով դրանք ԵՄ-ի խնամակալությանը: Ապա նախկին հետխորհրդային տարածքում, մասնավորապես՝ Ուկրաինայում եւ Հարավային Կովկասում ԱՄՆ-ի աջակցությամբ սկսվեց արեւմտյան քաղաքական եւ ռազմական ազդեցության տարածումը, որի միջոցով այսօր ԵՄ-ի ներթափանցումն այս տարածք դարձել է շատ ավելի դյուրին: Վեր-

ջապես, ներկա փուլում Մեծ Մերձավոր Արեւելքում Ամերիկան պատերազմ է վարում, ըստ էության, նաեւ եվրոպական անվտանգության եւ շահերի ապահովման համար: Դրանով կյանքի է կոչվում *«Ամերիկան կռվում է, Եվրոպան՝ վերակառուցում»* բանաձեւը:

Վերջապես, ՆԱՏՕ-ն անհրաժեշտ է նաեւ թեկուզ այն պատճառով, որ այս կազմակերպությունն ավելի կառավարելի եւ նպատակաուղղված է, քան արդեն վաղուց հնացած ՄԱԿ-ը կամ ԵԱՀԿ-ն: Թեեւ ամերիկյան քաղաքագետ Չարլզ Քափչանը նշում է, որ այս տասնամյակի ավարտին *«ԱՄՆ-ին շատ քիչ անելիք կմնա Եվրոպայում»,* սակայն ամերիկյան վարչակազմը լավ գիտի, որ ՆԱՏՕ-ն այն ինստիտուտն է, որը թույլ է տալիս նրան ազդել Եվրոպայի վրա:

Միեւնույն ժամանակ, սակայն, ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ ԵՄ-ի ընդլայնումը ստեղծում է Եվրոպայի նոր պատկերը, որը չի համընկնում այն տեսլականի հետ, որը երեւում էր Վաշինգտոնից եւ Փարիզից: Պարզվեց, որ ՆԱՏՕ-ի նորեկների շահերը միշտ չէ, որ համընկնում են «հնաբնակների» շահերին, իսկ Եվրոպայի ձգողականության կենտրոնն այժմ տեղաշարժվում է դեպի արեւելք:

Ըստ էության, այսօր երբեմնի միասնական տրանսատլանտյան աշխարհը ներկայանում է չորս դեմքով, որոնք միասնական են իրենց արժեքային համակարգով, սակայն բաժանված են տարբեր շահերով եւ ստրատեգիաներով: Առաջինը Միացյալ Նահանգներն է, որն այդ աշխարհի առաջնորդն ու զարգացման շարժիչն է: Երկրորդը Արեւմտյան Եվրոպայի երկրներն են (Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները, մասամբ՝ Գերմանիան եւ Իտալիան), որոնք պատրաստ են աջակցել ամերիկյան առաջնորդին եւ կարեւորում են Եվրոպայի համաշխարհային հզորության նպատակով ԱՄՆ-ի հետ դաշինքը, թեեւ ունեն իրենց շահերը եվրոպական շինարարության հարցում: Երրորդը Արեւմտյան Եվրոպայի այն երկրներն են (Ֆրանսիան, Իսպանիան, մասամբ՝ Բելգիան եւ նույն Գերմանիան), որոնք դիտում են ԵՄ-ը որպես նոր համաշխարհային ուժային կենտրոն, հաճախ՝ ԱՄՆ-ի հետ մրցակցության համատեքստում, սակայն ոչ թե հակամարտության, այլ ավելի շուտ՝ տնտեսական եւ հոգեբանական դիմակայության տեսքով, որի արդյունքում Եվրոպան կրկին կստանձնի համաշխարհային առաջնորդի դերը եւ կազատվի ԱՄՆ-ից այլեւս անհիմաստ դարձած կախվածությունից: Եվ, վերջապես, Ատլանտյան աշխարհի չորրորդ դեմքն են ձեւավորում Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները, որոնք ոչ միայն այդ աշխարհի նոր տարրն են, այլ նաեւ համարում են, որ իրենց եվրոպական ինտեգրման եւ Միացյալ Եվրոպայում սեփական դիրքերի ամրապնդման համար անհրաժեշտ է դաշինք հենց ԱՄՆ-ի հետ:

ՆԱՏՕ-ի վերափոխման անբաժան եւ անհրաժեշտ տարրն է համարվում դաշինքի ընդլայնումը եւ աշխարհաքաղաքական ծավալումը: Վերջին յոթ տարիներին ՆԱՏՕ-ի անդամների թիվը 16-ից աճել է 26-ի: Թեեւ Ռիգայի գագաթաժողովում որոշում չկայացվեց, թե որ երկրներն են լինելու հաջորդը ՆԱՏՕ-ին միանալու շարքում, սակայն հստակորեն միանալու ազդանշան տրվեց Խորվաթիային, Ալբանիային եւ Մակեդոնիային:

Միաժամանակ ՆԱՏՕ-ի դռները բաց հայտարարվեցին նաեւ Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Մոնթենեգրոյի, Սերբիայի, Բոսնիայի համար (վերջին երեքը հրավիրվեցին միանալ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, որը հանդիսանում է անդամակցության ճանապարհին առաջին քայլը): Կոնկրետ ով կհրավիրվի միանալու դաշինքին՝ կորոշվի արդեն 2008 թվականին:

ԱՄՆ-ը արդեն գործնական քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: Գագաթաժողովից առաջ ԱՄՆ-ի Սենատը որոշում կայացրեց ՆԱՏՕ-ին Վրաստանի, Խորվաթիայի, Մակեդոնիայի եւ Ալբանիայի միանալու ձգտմանն աջակցություն հայտնելու մասին եւ այդ գործընթացի իրականացման համար հատկացրեց մոտ 20 մլն դոլար, որի կեսը հասնելու է Վրաստանին: Հիմա ամեն ինչ կախված է թեկնածու երկրների՝ դաշինքի չափանիշներին համապատասխանելու ջանքերից: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաափ Սխեֆերի խոսքերով, *«2008-ին կայանալիք որոշումները կախված են լինելու անդամակցության համար անհրաժեշտ պայմանների կատարման ընթացքից»:*

Այս փուլում թեկնածուներին ժամանակ է տրվում անդամակցության համար նախապատրաստվելու համար: Ավելին, ամերիկյան սենատոր Ռիչարդ Լուգարը նույնիսկ առաջարկել է ՆԱՏՕ-ին՝ խրախուսել Ադրբեջանի եւ Ղազախստանի հետ հարաբերությունները (ի դեպ, անմիջապես գագաթաժողովից հետո ՆԱՏՕ-ի բրյուսելյան կենտրոնակայան այցելեց Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաեւը), որոնց անդամակցությունը պետք է մշտապես լինի օրակարգում: Դա վկայում է, որ ՆԱՏՕ-ն միտված է կենտրոնանալ նաեւ եվրաատլանտյան տարածության էներգետիկ անվտանգության խնդիրների վրա: Լուգարն անգամ առաջարկեց կիրառել ՆԱՏՕ-ի հիմնարար դրույթը՝ Վաշինգտոնյան պայմանագրի 5-րդ հոդվածը, համաձայն որի՝ դաշինքի անդամներից մեկի դեմ ագրեսիայի դեպքում մնացածները պարտավորվում են օգնել եւ պաշտպանել նրան, ինչպես նաեւ «էներգետիկ զենքի» կիրառման դեպքում, երբ դաշինքի որեւէ անդամին զրկում են էներգետիկ ռեսուրսների մատակարարումներից, ինչի հետեւանքով ուղղակի եւ անուղղակի սպառնալիք է առաջանում տվյալ պետության քաղաքացիների կյանքի համար, եւ ինչը նաեւ ծառա-

յում է որպես տվյալ պետությանն անցանկալի որոշումներ պարտադրելու ուղի: Սակայն էներգետիկ անվտանգության հարցում ՆԱՏՕ-ի ներդրումը, թերեւս, կարող է սահմանափակվել միայն էներգետիկ ուղիների պաշտպանության խնդիրներով:

ՆԱՏՕ-ի ընդլայնումը հիմնավորվում էր եւ է Եվրոպայում ու նրա սահմաններից դուրս կայունության եւ ժողովրդավարության տարածման նպատակով: Միեւնույն ժամանակ, դրա անվան տակ փաստորեն իրականացվում է Արեւմուտքի քաղաքական եւ քաղաքակրթական ծավալումը եւ Վանկուվերից մինչեւ Վլադիվոստոկ եւ Տոկիո ընկած անծայրածիր տարածության նկատմամբ վերահսկողության սահմանումը: Դեռ 9 տարի առաջ այդ ժամանակվա ԱՄՆ պետքարտուղար Մ.Օլբրայթը նշել է. *«Արեւմուտքն այլեւս չունի ֆիքսված արեւելյան սահման»:* Այս թեզը, թերեւս, կարող է համարվել ՆԱՏՕ-ի դիրքերի եւ տրանսֆորմացիայի ընկալման բանալի:

Հակառակ դեպքում, ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի ընդլայնումը կհայտարարվեր «փակված»: Սակայն եթե նման քայլ արվեր, ապա այն կնշանակեր, որ Արեւմուտքը ֆիքսում է իր սահմանը եւ համաձայնվում է Ռուսաստանի կամ այլ ուժի հետ Եվրասիան ազդեցության գոտիների բաժանելու հարցում: Մինչդեռ ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության շնորհիվ երբեմնի ռուսաստանակենտրոն տարածքը, որի մեջ մտնում էին նախկին խորհրդային հանրապետությունները, դառնում է եվրաատլանտյան ուղեծրի մեջ մտնող տարածք: Եթե Վարշավայի պայմանագրի փլուզումից հետո ՆԱՏՕ-ից պահանջվեց տասը-տասնհինգ տարի նրա նախկին անդամների ինտեգրման համար, ապա հաջորդ տասը տարիների ընթացքում փորձ կարվի արդեն ԽՍՀՄ-ի արեւմտյան հանրապետություններն ինտեգրել դաշինքի մեջ: Դա համընկնում է Զբիգնեւ Բժեզինսկու կանխատեսումների հետ, որ ՆԱՏՕ-ի ընդլայնման հաջորդ փուլը, որը նա անվանել է «Կիեւյան» (նախորդ երկու՝ Վարշավյան եւ Վիլնյուսյան փուլերի հետ զուգահեռ անցկացնելով), տեղի կունենա 2010-2012 թվականներին, երբ դաշինքին կմիանան Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը եւ Մոլդովան:

Ընդ որում, ՆԱՏՕ-ի ընդլայնումը բխում է ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական ռազմավարություններից, որոնք այսօր միտված են Լիսաբոնից մինչեւ Շանհայ եւ Տոկիո ձգվող մայրուղիների (ավտոմոբիլային, երկաթուղային, նավթամուղային եւ գազամուղային) ցանցի ստեղծմանը: Այս առումով, ՆԱՏՕ-ի ծավալումը համընկնում է այդ մայրուղիների հիմնական ուղղությունների հետ:

Իսկ դա նշանակում է, որ ՆԱՏՕ-ն մեկ առանցքի շուրջ համախմբված միությունից վերածվում է ցանցային միության, որտեղ առկա

են մի քանի կարեւոր առանցքային տարածաշրջաններ: Դա ուրվագծում է ՆԱՏՕ-ի եւ նրա բանակների նոր գործառույթները. կատարել ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների, ինչպես նաեւ նրանց տնտեսությունների համար մոտավորապես այն դերը, որը ժամանակին կատարում էր բրիտանական նավատորմը՝ Բրիտանական կայսրության եւ բրիտանական առեւտրի համար: Միայն թե այս անգամ ծովային ուղիների փոխարեն պաշտպանության տակ են առնվելու երկաթուղիները, նավթային խողովակաշարերն ու գազամուղները:

Եթե ուշադիր լինենք, ապա կարելի է նկատել, որ ՆԱՏՕ-ի բոլոր նախորդ եւ ապագա ընդլայնումներն ունեն գեոստրատեգիական եւ գեոտնտեսական դրդապատճառներ: Բոսնիայի եւ Կոսովոյի պատերազմների եւ Սլովենիայի անդամակցության միջոցով ապահովվեց ՆԱՏՕ-ի մուտքը Բալկաններ, եւ այստեղ բոլոր մնացած պետությունների անդամակցությունը դաշինքին այլեւս ժամանակի խնդիր է: Լեհաստանի, Սլովակիայի, Հունգարիայի եւ Բալթյան երկրների ինտեգրումն ամբողջությամբ փակեց նախկինում Եվրոպայի բուֆերային գոտի համարվող տարածությունը, ինչպես նաեւ նպաստավոր պայմաններ ստեղծեց դաշինքին Ուկրաինայի միացման համար: Իսկ Ռումինիայի եւ Բուլղարիայի միացումը ՆԱՏՕ-ին կապեց դաշինքի մնացած անդամներին ցամաքային ճանապարհով մինչ այդ կտրված Հունաստանի եւ Թուրքիայի հետ: Իսկ արդեն Հարավային Կովկասի երկրների միացումը ՆԱՏՕ-ին թույլ կտա ամբողջացնել Սեւծովյան տարածաշրջանի «նատոյացումը» եւ ամուր հենակետեր ստեղծել հարավկովկասյան մայրուղիների խաչմերուկը վերահսկելու եւ Մեծ Մերձավոր Արեւելքում քաոսային իրավիճակին դիմակայելու համար:

# ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆ–ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

***Սեւակ Սարուխանյան***

*Դոնալդ Ռամսֆելդի հեռացումը ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնից որոշակի փոփոխություններ կարող է մտցնել Իրան—ԱՄՆ հարաբերություններում: Փաստորեն, ԱՄՆ ներկայիս վարչակազմից հեռացվեց մի անձնավորություն, որը բավական կոշտ վերաբերմունք ուներ Իրանի եւ նրա ներկա վարչակազմի նկատմամբ ու չնայած միշտ խուսափում էր կոշտ հայտարարություններից, այնուամենայնիվ, իրավացիորեն համարվում էր Իրանի դեմ պատերազմի կողմնակից:*

*Միեւնույն ժամանակ, ԱՄՆ «իրանական քաղաքականության» վրա ազդեցություն կարող է ունենալ նաեւ Ջոն Բոլթոնի հեռացումը ՄԱԿ ԱԽ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի պաշտոնից:*

Կենտրոնական հետախուզական վարչության նախկին ղեկավար Ռոբերտ Գեյթսի նշանակումը ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնում մատնանշում է, առնվազն Իրանի հետ հարաբերություն-ների կտրվածքով, ԱՄՆ նոր քաղաքական գծի ձեւավորման մասին:

**Ռոբերտ Գեյթսը եւ իրանական հիմնախնդիրը**

Ռոբերտ Գեյթսը եւ Զբիգնեւ Բժեզինսկին իրենց «նոր մոտեցումը» ԱՄՆ—Իրան հարաբերությունների հիմնահարցին շարադրել են 2004թ. *«Իրան. նոր մոտեցման ժամանակ»* հետազոտությունում՝ հրատա-րակված Արտաքին հարաբերությունների խորհրդի կողմից:

Գեյթսի, այսպես կոչված, «իրատեսական» մոտեցումն իրանական հիմնախնդրին միայն որոշակի վերապահումներով կարելի է անվանել «նոր»: Այս քաղաքականության ակունքները գնում են դեռ 1998թ., երբ Բիլ Քլինթոնի դեմոկրատական վարչակազմի պետական քարտուղար Մադլեն Օլբրայթը հանդես եկավ Իրանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորության մասին հայտարարությամբ:

Միեւնույն ժամանակ, Բժեզինսկի—Գեյթս մոտեցումը, ի տարբերու-թյուն 1998թ. ամերիկյան հայտարարությունների, բավական համա-կարգված եւ հիմնավորված քաղաքական ռազմավարության տեսք է

ստացել: Սրա պատճառը, թերեւս, այն է, որ ի տարբերություն 1998թ., Իրանն այլեւս Աֆղանստանով եւ սադամյան Իրաքով սեղմված պետություն չէ, այլ վերածվել է տարածաշրջանային հզոր ուժի կենտրոնի, առանց որի մասնակցության Մերձավոր եւ Միջին Արեւելքում հնարավոր չէ լուծել որեւէ կարեւոր քաղաքական հիմնախնդիր:

«Իրան. նոր մոտեցման ժամանակ» հետազոտության հիմնական գաղափարներն են.

Իրան—ԱՄՆ երկխոսության հաստատումը չպետք է սպասի բացարձակ ներդաշնակության հաստատման երկու պետությունների կառավարությունների միջեւ՝ «պատմության ընթացքում ԱՄՆ-ը ունեցել է նորմալ եւ կառուցողական հարաբերություններ այն պետությունների հետ, որոնց քաղաքականությունը եւ փիլիսոփայությունը չեն համընկել ամերիկյանի հետ»:

ԱՄՆ—Իրան հարաբերությունները չեն կարող կարգավորվել, մինչեւ Իրանը հաշվի չնստի ամերիկյան մոտեցումների եւ շահերի հետ, այն է՝ հրաժարվել միջուկային զենքի ստեղծման ցանկություններից եւ դադարեցնել աջակցությունն ահաբեկչական կազմակերպություններին: Միեւնույն ժամանակ, սա «չի կարող երկխոսություններ սկսելու նախապայման լինել»:

Գործ ունենալով Իրանի հետ՝ Վաշինգտոնը պետք է հրաժարվի վարչակարգի փոփոխման քաղաքականությունից, քանի որ այն օգտակար չէ եւ ավելի է բարդացնում հարաբերությունները:

ԱՄՆ-ը պետք է շարունակի կանխարգելիչ քաղաքականություն վարել Իրանի՝ միջուկային պետության չվերածվելու ուղղությամբ: Հետազոտության հեղինակների կարծիքով՝ կարելի է համոզել, որպեսզի Իրանը չստեղծի միջուկային զենք հիմնականում մեկ ճանապարհով. ապացուցել, որ ԱՄՆ-ը չի սպառնում նրա ազգային շահերին: Իրանի միջուկային ծրագրի հիմնախնդիրը պետք է լուծել խաղաղ ճանապարհով: Հետաքրքրական է հետեւյալ գաղափարը. «Հաշվի առնելով այն, որ Վաշինգտոնն ամեն դեպքում մեղավոր կճանաչվի, եթե անգամ Իսրայելը միակողմանի հարվածներ հասցնի Իրանին, պետք է Իսրայելին պարզ հասկացնել, որ այդպիսի քայլը կարող է ուղղակիորեն հարվածել ԱՄՆ շահերին»:

Իրանին պետք է ներքաշել ներիրաքյան եւ ներաֆղանական կարգավորման գործընթացների մեջ:

Հարկ է նշել, որ Գեյթսի տեսակետը Իրանի հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին քիչ փոփոխվեց անգամ այն բանից հետո, երբ Իրանում նախագահական ընտրություններում

հաղթանակ տարավ Մահմուդ Ահմադինեժադը, որը շուտով աչքի ընկավ մի շարք հակաամերիկյան եւ հակաիսրայելական հայտարարություններով: Հակառակը, «նոր մոտեցման» կողմնակիցները սկսեցին ԱՄՆ-ին անուղղակիորեն մեղադրել Իրանում ծայրահեղականների հաղթանակի մեջ, քանի որ ԱՄՆ հարձակողական եւ հակաիրանական հայտարարություններն ավելի են արմատականացնում իրանական ներքաղաքական գործընթացը:

2005թ. ընթացքում Գեյթսը եւ Բժեզինսկին հանդես եկան առաջարկություններով, որպեսզի ԱՄՆ-ը ընդգրկվի Իրան—«եվրաեռյակ» բանակցային գործընթացում եւ միեւնույն ժամանակ Իրանի համար տնտեսական տեսակետից որոշակի ձեռնտու քայլեր ձեռնարկի: Ինչպես հայտնի է, 2006-ի ամռանից ԱՄՆ-ը ուղղակիորեն ներգրավվեց Իրանի հետ բանակցությունների մեջ, իսկ հոկտեմբերին ԱՄՆ-ը վերջապես կատարեց Իրանի երկարամյա պահանջը՝ վերսկսել ինքնաթիռների մասերի վաճառքն իրանական ավիաընկերություններին:

Փաստորեն, կարելի է նշել, որ ԱՄՆ քաղաքական ընտրանում, մանավանդ Ռոբերտ Գեյթսի պաշտպանության նախարար նշանակվելուց հետո, ուժեղացել են Իրանի հետ հարաբերությունների կարգավորման կողմնակիցների դիրքերը:

### Ջոն Բոլթոնի հնարավոր հեռացումը ՄԱԿ ԱԽ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի պաշտոնից

Դեմոկրատների դիրքերի ամրապնդումը ԱՄՆ ներքաղաքական դաշտում կարող է հանգեցնել նաեւ ՄԱԿ ԱԽ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Ջոն Բոլթոնի հեռացմանն իր զբաղեցրած պաշտոնից:

Ջ.Բոլթոնը հայտնի է ոչ միայն որպես ԱՄՆ նեոկոնսերվատորների կարկառուն ներկայացուցիչ, այլ նաեւ Իրանի միջուկային հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու կողմնակից: Թեեւ Բոլթոնի ռազմատենչ հայտարարությունները բավական մեղմացել են ՄԱԿ ԱԽ-ում նրա հայտնվելուց հետո, սակայն գաղափարական տեսակետից նրան կարելի է անվանել «հակաիրանական» գործիչ, որը կողմնակից չէ Իրանի ներկայիս վարչակարգի հետ հարաբերությունների կարգավորմանը:

Սակայն Բոլթոնի հնարավոր հեռացումն աչքի է ընկնում մի շատ կարեւոր հանգամանքով եւս. նրա պաշտոնում կարող է նշանակվել Իրաքում ԱՄՆ դեսպան Զալմայ Խալիլզադը, որը ե՛ւ Աֆղանստանի, ե՛ւ Իրաքի հիմնահարցերով բազմիցս գաղտնի (եւ ոչ այնքան գաղտնի) բանակցել է պաշտոնական Թեհրանի հետ:

Այսպես. նոյեմբերին Արտաքին հարաբերությունների խորհրդի փակ նիստում քննարկվել է Իրանի հետ ԱՄՆ բանակցությունների հարցը: Քննարկմանը մասնակցել է նաեւ Իրաքում ԱՄՆ դեսպան Զալմայ Խալիլզադը, որն ասել է, թե Բուշի հանձնարարականով վերջին մեկ տարվա ընթացքում աշխատել է կազմակերպել իրանա-ամերիկյան միջպետական գաղտնի բանակցություններ՝ նվիրված Իրաքի հիմնախնդրի կարգավորմանը (հիմնական հարցերից է եղել նաեւ Իրաքի բաժանումը շիական, սուննիական եւ քրդական մասերի. այս ծրագրի հիմնական հեղինակն ու լոբբիստն է ԱՄՆ նախկին պետքարտուղար, «հին պահպանողական» Ջեյմս Բեյքերը, որի ազդեցությունը հանրապետական կուսակցությունում վերջին մեկ տարվա ընթացքում զգալիորեն աճել է):

Սակայն, ըստ Խալիլզադի, նա ստիպված է եղել դադարեցնել աշխատանքն իրանցիների հետ, քանի որ նրան զանգահարել եւ ԱՄՆ նախագահի անունից այդ մասին ասել է Ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Հեդլին:

Ըստ ամերիկյան «Foreign Policy» հանդեսի՝ ՄԱԿ ԱԽ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի պաշտոնում Խալիլզադի նշանակմանը հիմնականում կարող է խանգարել այն, որ նա ավելի քան պետք է Վաշինգտոնին հենց Բաղդադում: Խալիլզադի բարձր մասնագիտական ունակությունները եւ իրաքյան իրադարձություններին քաջատեղյակ լինելը կարող են խանգարել նրա՝ ՄԱԿ ԱԽ-ում հայտնվելուն:

Ինչեւէ, այսօր ԱՄՆ քաղաքական դաշտում զգալիորեն ամրապնդվում են Իրանի հետ հարաբերությունների կարգավորման կողմնակիցների դիրքերը: Սակայն դա չի նշանակում, թե միանշանակ կարելի է սպասել Իրան—ԱՄՆ հարաբերությունների բարելավման:

Բանն այն է, որ 2004թ., երբ պատրաստվել էր ԱՄՆ ներկայիս պաշտպանության նախարարի զեկույցը Իրանի մասին, իսլամական հանրապետությունը գտնվում էր որակապես այլ իրավիճակում, քան ներկայումս: Այդ իրավիճակի բաղադրիչներն էին.

1. ԱՄՆ որոշակի հաջողություններն Իրաքում եւ դրանից բխող՝ Իրանի վրա հնարավոր հարձակման հեռանկարները,

2. Իրանի ներքաղաքական դաշտում «բարեփոխիչների» դեռեւս ամուր դիրքերը:

Այս պարագաներում Իրանի ղեկավարությունը, հավանաբար, պատրաստակամորեն կգնար ԱՄՆ-ի հետ երկխոսության, ինչպես, օրինակ, արվեց ԵՄ «եռյակի» հետ միջուկային հիմնախնդրի հարցում:

2006թ. իրավիճակը միանգամայն այլ է: Իրանական քաղաքական դաշտում գերակայում են «պահպանողականները», իրաքյան կառավարությունը հիմնականում բաղկացած է իրանամետ շիական քաղաքական ուժերի ներկայացուցիչներից: Ինչ վերաբերում է Իրանի վրա հարձակմանը, ապա դրա հնարավորությունը բավական նվազել է, ինչը Թեհրանին թույլ է տալիս ավելի ազատ եւ անվարան աշխատել միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, ներկայումս Իրանի իշխանական բուրգի վերեւում գտնվող պահպանողականներն իրանա-ամերիկյան հարաբերությունների կարգավորման նկատմամբ ունեն ոչ միանշանակ մոտեցում, քանի որ այդ հարաբերություններից է նաեւ կախված իրանական ներքաղաքական գործընթացների այս կամ այն ուղղությունը:

# ԻՐԱՔՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*Սարգիս Հարությունյան*

## Ամերիկյան քաղաքականության փոփոխությունը

Ս.թ. դեկտեմբերի 6-ին ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ու Ներկայացուցիչների տան Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախկին նախագահ Լի Համիլթոնի գլխավորած «Iraq Study Group»-ը ներկայացրեց Վաշինգտոնի իրաքյան քաղաքականությանը վերաբերող առաջարկությունների փաթեթը:

79 հանձնարարականներից կազմված զեկույցը որպես իրավիճակի կարգավորման առանցքային տարրեր առանձնացնում է հետեւյալը.

❖ Իրաքում կայունության եւ ազգային համերաշխության վերահաստատման համար որոշիչ է նրան սահմանակից բոլոր երկրների ու տարածաշրջանային մեծ տերությունների փոխհամաձայնությունը, եւ այդ առումով ընդգծվում է բանակցային գործընթացում Իրանի ու Սիրիայի ներգրավման անհրաժեշտությունը,

❖ ռազմական տեսանկյունից զեկույցն առաջարկում է առօրյա՝ մարտավարական բնույթի անվտանգության ապահովումն աստիճանաբար փոխանցել իրաքյան ուժային կառույցներին, ուժեղացնել վերջիններիս կարողությունները՝ ներառյալ այդ կառույցներում ամերիկյան հրահանգիչների թվակազմի ավելացման միջոցով (ենթադրվում է 4 հազարից այդ թիվը հասցնել 20 հազարի), եւ վերջապես՝ մինչեւ 2008թ. առաջին եռամսյակը Իրաքից դուրս բերել ԱՄՆ զինուժի մարտական այն ստորաբաժանումները, որոնք ներգրավված չեն լինի Իրաքում մնացող ամերիկյան կարողությունների պաշտպանության գործում:

Ըստ որոշ տեղեկությունների, Իրաքում առկա ամերիկյան մոտ 150 հազարանոց ռազմուժի մարտական զորամիավորումները, որոնք իրականացնում են, այսպես կոչված, առաջին գծի ռազմական գործողություններ, կազմում են 15 բրիգադ՝ թերեւս, 52,500 ընդհանուր թվակազմով (քանի որ, ըստ Պենտագոնի չափանիշների, յուրաքանչյուր բրիգադ բաղկացած է 3.500 հոգուց): Նախատեսվում է, որ մոտ 1,5 տարի անց ամերիկյան զինուժը Իրաքում պետք է հասնի 70 հազարի սահմանին, որը եւ կարող է համեմատաբար երկար ժամանակահատ-

վածով (ներկայումս խոսվում է 5-10 տարվա մասին) տեղակայվել մերձավորարեւելյան այդ երկրում: Բացի այդ, համաձայն դեռեւս նոյեմբերի 6-ին ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդի՝ Սպիտակ տուն ներկայացրած զեկույցի, ենթադրվում էր նաեւ կրճատել Իրաքում առկա ամերիկյան ռազմակայանները՝ 55-ից հասցնելով 5-ի:

Եթե Իրանի ու Սիրիայի հետ բանակցություններ վարելու «Iraq Study Group»-ի առաջարկության վերաբերյալ Սպիտակ տան բացասական մոտեցումը, ըստ ամենայնի, պետք է բացատրել հիմնականում մարտավարական բնույթի հաշվարկներով՝ «թույլ դիրքերով Թեհրանի հետ բանակցություններ վարելու» մտահոգության առկայությամբ, ապա նշված ձեւաչափով ռազմուժի կրճատման առաջարկության նկատմամբ ԱՄՆ ռազմաքաղաքական վերնախավում ի հայտ եկած տարաձայնությունները, թերեւս, ունեն ավելի լուրջ ենթատեքստ:

Ամերիկյան աղբյուրների վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ռազմուժի նման կարգի կրճատմանն առաջին հերթին ընդդիմանում են ԱՄՆ ռազմական շրջանակներում՝ մտավախություն ունենալով, թե Իրաքից զորքերի դուրսբերման առաջարկվող արագությունը կարող է նպաստել անկայունության խորացմանը: Մյուս կողմից՝ զորքերի մասնակի դուրսբերման գաղափարին, ըստ էության, սկզբունքային առարկություն չկա:

Պետք է ենթադրել, որ ԱՄՆ իրաքյան նոր քաղաքականության ռազմական բաղկացուցչի նկատմամբ Վաշինգտոնի մոտեցումները վերջնական տեսք կընդունեն միայն իրաքյան խնդրի առնչությամբ Պենտագոնում, պետքարտուղարությունում եւ ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդում ներկայումս զուգահեռաբար ընթացող մշակումների ավարտից եւ համապատասխան զեկույցների ներկայացումից հետո:

Թե՛ նոյեմբերի 25-ին էր Ռիյադում ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնիի հանդիպումը Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի հետ, թե՛ հինգ օր անց Հորդանանի մայրաքաղաք Ամանում Բուշ-կրտսերի բանակցությունները այդ երկրի թագավոր Աբդուլլահ Երկրորդի, Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքիի եւ եգիպտացի ու սաուդցի բարձրաստիճան պաշտոնյաների եւ թե՛ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի բանակցությունները Պարսից ծոցի, Հորդանանի եւ Եգիպտոսի արտգործնախարարների հետ կարող են վկայել, որ դիվանագիտական առումով ամերիկյան վարչակազմը սկսել է կյանքի կոչել մերձավորարեւելյան խնդիրների կապակցությամբ պետական վերնախավում ձեռք բերված փոխհամաձայնությունը:

**«Դաշնային» Իրաք**

2006թ. հոկտեմբերի 11-ին Իրաքի խորհրդարանն ընդունեց հատուկ մի օրենք, որով սահմանվում է դաշնային շրջանների ստեղծման մեխանիզմը: Դաշնային շրջանների ստեղծումը նախատեսված էր դեռեւս 2005թ. հոկտեմբերի 15-ի հանրաքվեով ընդունված Իրաքի նոր սահմանադրությամբ: Ըստ հոկտեմբերի 11-ի օրենքի, Իրաքի 18 նահանգներից յուրաքանչյուրը կարող է դաշնային շրջաններ ձեւավորել տեղի (նահանգային) օրենսդիր մարմնի պատգամավորների 2/3-րդի համաձայնությամբ անցկացված հանրաքվեի դրական արդյունքի դեպքում: Միաժամանակ, հոկտեմբերի 11-ի օրենքը 18 ամսով հետաձգեց ինքնավար շրջանների ստեղծման կարգի ընդունումը:

Թեեւ սուննիական «Իրաքի փոխհամաձայնության ճակատն» ու շիական երկու խմբակցություններ՝ ալ-Սադրի խմբակցությունը եւ «Ալ-Ֆադիիլան», բոյկոտեցին քվեարկությունը, սակայն խորհրդարանում շիական ամենամեծ խմբակցությունները՝ «Իրաքյան միավորված ալյանսն» ու վարչապետ ալ-Մալիքիի «Հիզբ ալ-Դավահը», ինչպես նաեւ քուրդ պատգամավորները միաձայն ընդունեցին ավելի քան 200 հոդված պարունակող օրինագիծը:

Հոկտեմբերի 11-ի օրենքի ընդունումն առաջին հերթին նշանակում է ս.թ. հունիսի 7-ին Իրաքում «Ալ-Ղայիդայի» առաջնորդ Աբու Մուսաբ ալ-Զարքավիի սպանությամբ մեկնարկած քաղաքական կոնսենսուսի ավարտ: Հիմնական տեղաշարժը գրանցվել է շիական իշխող քաղաքական ուժերի դիրքորոշման մեջ: Եթե 2006թ. ամռան սկզբին շիաների պատկերացումները սահմանափակվում էին իրաքյան կոալիցիոն կառավարությունում քաղաքական ամենամեծ ուժը լինելով[1], ապա ամռան վերջից սկսած՝ նավթով հարուստ Իրաքի հարավային շիական նահանգների ինքնավարության ձեռքբերումը դարձավ նրանց առաջնային նպատակը:

Շիական իշխող քաղաքական ուժերի մոտ նման տրասնֆորմացիան առաջին հերթին պետք է կապել իսրայելա-լիբանանյան պատերազմի արդյունքում տարածաշրջանում Թեհրանի դերակատարության աճի եւ

[1] Շիաներին են պատկանում Իրաքի փոխնախագահներից մեկի, վարչապետի, ազգային անվտանգության, ներքին գործերի, նավթի ու ֆինանսների նախարարների, ինչպես նաեւ երկրի նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդականի պաշտոնները:

որպես հետեւանք Լիբանանում շիական «Հիզբալլահ» խմբավորման ազդեցության ընդլայնման հետ, որոնք էլ ի վերջո հանգեցրին Իրաքի շիական քաղաքական ուժերի միջեւ առկա տարաբնույթ հակասությունների մի զգալի մասով ստորադասմանը ինքնավարության գաղափարին:

Երկրորդ կարեւոր հանգամանքն այն է, որ Իրաքում շիական ինքնավարության ստեղծմամբ Իրանը ձգտում է Realpolitik-ի դաշտ տեղափոխել իսրայելա-լիբանանյան պատերազմի արդյունքում ձեռք բերված տեղեկատվական-հոգեբանական առավելությունը: Շիական ինքնավարության կամ, իրականում, շիական նոր պետության երեւան գալը Պարսից ծոցի ափին կարճ ժամանակ անց լիովին նոր հարթություն կտեղափոխի միջուկային տերության կարգավիճակին մոտեցող Իրանի քաղաքական ազդեցությունը ոչ միայն ռազմավարական մեծ արժեք ներկայացնող Ծոցում, այլեւ ողջ Մերձավոր Արեւելքում:

Երրորդ՝ քիչ հավանական է, որ հոկտեմբերի 11-ի օրենքն ընդունվեր ամերիկյան կողմի սկզբունքային առարկության դեպքում: Հետեւաբար, նման օրենքի ընդունումը կարող է վկայել, որ Իրաքն ինքնավար շրջանների բաժանելը Վաշինգտոնում առնվազն դիտարկվում է որպես ստեղծված իրավիճակից դուրս գալու եւս մեկ ելք:

### Հետեւություններ եւ հեռանկար

Չնայած «Iraq Study Group»-ի հետեւությունների նկատմամբ Սպիտակ տնից հնչող բացասական կարծիքներին՝ ակնհայտ է, որ Բեյքեր–Համիլթոն խմբի պատրաստած զեկույցն, ընդհանուր առմամբ, հիմք է ծառայելու ԱՄՆ մերձավորարեւելյան հետագա քաղաքականության մշակման ու իրականացման համար: Հակառակ պարագայում անտրամաբանական է նույն խմբի ներկայացուցիչ, 1991–1993թթ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը գլխավորած Ռոբերտ Գեյթսի հաստատումը (որն, ի դեպ, տեղի ունեցավ նույն օրը, ինչ «Iraq Study Group»-ի զեկույցի հրապարակումը՝ դեկտեմբերի 6-ին) ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնում: Նոր կարգավիճակում Գեյթսի առաջին հայտարարությունները, որոնք քննադատում են Վաշինգտոնի իրաքյան գործող քաղաքականությունը, վկայում են այդ հետեւության օգտին:

Մյուս կողմից՝ ԱՄՆ իրաքյան քաղաքականության ձեւավորման հարցում իրենց ազդեցությունն են թողնելու ինչպես ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդի նոյեմբերի 6-ի,

Բուշ-կրտսերի ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Հեդլիի նոյեմբերի 8-ի զեկուցագրերը, այնպես էլ Պենտագոնում, պետքարտուղարությունում ու Հեդլիի գլխավորած գերատեսչությունում իրականացվող մշակումները: Այդ առումով, «Iraq Study Group»-ի հանձնարարականները կարող են ենթարկվել որոշակի ձեւափոխումների (ըստ ամենայնի՝ մարտավարական բնույթի):

Չնայած ԱՄՆ նախագահի հայտարարություններին՝ Վաշինգտոնը գնալու է Իրանի ու Սիրիայի հետ բանակցությունների սկզբնավորմանը: Այդ մասին անուղղակի վկայում են մոտ 25-ամյա ընդմիջումից հետո Իրաքի ու Սիրիայի միջեւ ս.թ. նոյեմբերի 21-ին դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը, նոյեմբերի 29-ին Թեհրանում Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանիի ու Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի միջեւ անվտանգության ոլորտում կնքված համաձայնագիրը, ամերիկյան վարչակազմի բարձրաստիճան ներկայացուցիչների մերձավորարեւելյան վերոհիշյալ հանդիպումները, եւ որպես այդ ամենի արդյունք՝ դեկտեմբերի 5-ին Իրաքի վարչապետ ալ-Մալիքիի նախաձեռնությունը՝ իրաքյան խնդրի առնչությամբ հրավիրել տարածաշրջանային համաժողով:

Ամերիկա-իրանական առաջիկա կամ արդեն իսկ առկա բանակցությունների մասին են վկայում նաեւ Եգիպտոսում ընթացող իսրայելա-իրանական գաղտնի բանակցությունները: Ըստ իսրայելական աղբյուրների, վերջիններիս նպատակն է կարգավորել Իրանին իսրայելական ընկերությունների ունեցած մոտ $2 մլրդ պարտքը, որը գոյացել էր մինչեւ 1979թ. իսլամական հեղափոխությունը Իսրայելին Իրանի կողմից մատակարարված նավթի դիմաց:

Ընդհանուր առմամբ, ամերիկա-իրանական երկխոսությունը նշանակում է, որ Վաշինգտոնում այլեւս որպես փաստ են ընդունում Մերձավոր Արեւելքում Իրանի ազդեցության աճը եւ Իրաքում կայունության հաստատման գործում վերջինիս էական դերակատարումը:

# ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԿՆՃԻՌ

*Դավիթ Հովհաննիսյան*

Լիբանանի վրա վերահսկողություն հաստատելու համար թե՛ հարեւան երկրները եւ թե՛ գլոբալ դերակատարում ունեցող պետությունները մշտապես պայքար են մղել: Այս երկրի կարեւորությունը ներկայումս տարբեր դիրքերից յուրովի է գնահատվում: Ոմանց տեսակետից Լիբանանն ունի չափազանց կարեւոր աշխարհաքաղաքական դիրք, քանի որ հանդիսանալով միջերկրական խաչմերուկային հանգույց, այն միաժամանակ մատույց է դեպի միջինարեւելյան տարածաշրջանի սիրտը:

Մյուսների համար այն, շնորհիվ իր խառը կոնֆեսիոնալ կազմի, կարեւորվում է որպես բնական կամուրջ տարածաշրջանի ու Եվրոպայի, մասնավորապես՝ կաթոլիկ աշխարհի միջեւ:

Երրորդ տեսակետն այն է, որ առանց Լիբանանի չի ամբողջանում այսպես կոչված «շիական գոտին», որի կենտրոնը Իրանն է:

Բացի այդ, Լիբանանը գտնվում է Իսրայելի, Պաղեստինի, Սիրիայի, Հորդանանի անմիջական հարեւանությամբ, այսինքն՝ կամա թե ակամա մասնակից է համաշխարհային քաղաքականության վերջին տասնամյակների ամենաբարդ եւ բազմաբնույթ կոնֆլիկտի:

Կան եւ այլ մոտեցումներ, սակայն կարեւորն այն է, որ այս բոլոր գործոնների ազդեցության հետեւանքով, ինչպես նաեւ լիբանանյան հասարակության ներսում գոյություն ունեցող բարդ խնդիրների առկայության պատճառով այս երկիրը ոչ մի կերպ չի կարողանում երկարատեւ խաղաղություն եւ կայունություն հաստատել:

Վերջին երկարատեւ քաղաքացիական պատերազմը, որի հետեւանքով 100 հազարից ավելի մարդ զոհվեց, իսկ երկիրը վերածվեց փլատակների, ավարտվեց 1989թ., որից հետո հաստատվեց համեմատական կայունություն, որն ապահովվում էր նաեւ սիրիական բանակի ներկայությամբ: Պատերազմի տարիներին ավելի ընդգծվեց Լիբանանի ներքին քաղաքական դաշտի տարբեր հատվածների կախվածությունն արտաքին ուժերից. լիբանանյան քաղաքական ու սոցիալ-տնտեսական գործընթացների վրա ազդելու վերջիններիս հնարավորությունները կտրուկ աճեցին: Այս երեւույթները հատկապես շեշտվեցին սիրիական զինված ուժերը երկրից դուրս բերելուց հետո:

* * *

2006թ. հուլիսին սկսած իսրայելա-լիբանանյան պատերազմի ավարտից հետո, երբ Իսրայելը դուրս բերեց իր զինված ուժերը Լիբանանի տարածքից, ստեղծվեց բոլորովին նոր իրավիճակ, որի հիմնական բնորոշիչ գիծն այն էր, որ շիական «Հիզբալլահը» զրկվեց իր կարեւոր ռազմական հենակետերից եւ խաղաղապահ ուժերի տեղակայման պատճառով՝ նաեւ դրանց վերահսկման հնարավորությունից:

Մինչեւ պատերազմի ավարտը «Հիզբալլահը», հիմնվելով իր կողմնակիցների ու համակիրների եւ հատկապես՝ իր ռազմական ներուժի վրա, որն օգտագործվում էր թե՛ արտաքին թշնամու դեմ (Իսրայել) եւ թե՛ ներքին քաղաքական դաշտում իր ազդեցությունը մեծացնելու համար, ձեռք էր բերել Լիբանանի կառավարության մեջ 6 նախարարական աթոռ, ինչպես նաեւ լուրջ ներկայացված էր երկրի խորհրդարանում: Այն վայելում է լիբանանյան մի շարք ուժերի համակրանքը՝ Իսրայելի դեմ վարած իր պայքարի համար, բնականաբար, վայելում է Իրանի մշտական հովանավորությունը եւ հանդիսանում է հատկապես սիրիամետ ուժերի առաջնորդը:

Զրկվելով հարավում իր ռազմական խարիսխներից եւ զինակետերից ու ստիպված լինելով լուծումներ որոնել՝ ՄԱԿ ԱԽ զինաթափման պահանջի կապակցությամբ, «Հիզբալլահն» այլ ելք չունի, քան՝ օգտագործելով պատերազմի հետեւանքով աճած հեղինակությունը եւ ձեռք բերած դաշնակիցներին, մասնավորապես՝ քրիստոնեական փոքրամասնության առաջնորդ գեներալ Միշել Աունին (որը վերջին շրջանում աչքի է ընկնում հակաամերիկյան եւ հակաիսրայելական ռադիկալ հայտարարություններով եւ համեմատվում է Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսի հետ), փորձել տապալել վարչապետ Ֆուադ աս-Սինիորայի կառավարությունը, որին, իր հերթին, սատարում են Միացյալ Նահանգները, Եվրամիությունը, Սաուդյան Արաբիան եւ Արաբական պետությունների լիգայի անդամների մեծ մասը:

«Հիզբալլահի» գլխավոր քարտուղար Նասրալլան պատերազմի ավարտից անմիջապես հետո մեղադրեց վարչապես աս-Սինիորային այն բանում, որ վերջինս այն պահին, երբ երկրի հարավում շիա զինյալները ծանր մարտեր էին վարում իսրայելցիների դեմ, հրամայեց բռնագրավել «Հիզբալլահին» պատկանող զենքի եւ զինամթերքի մի մասը: Նա նաեւ մեղադրեց վարչապետին «երկրի թշնամիների հետ գաղտնի համաձայնության» գալու մեջ, որի նպատակն էր հեռացնել «Հիզբալլահը» լիբանանյան քաղաքական բեմից:

Իրավիճակն ավելի բարդացավ, երբ նոյեմբերին ՄԱԿ ԱԽ-ը որոշում ընդունեց միջազգային դատարան ստեղծել նախկին վարչապետ

Ռաֆիկ Հարիրիի եւ այլ քաղաքական ու հասարակական գործիչների սպանությունները հետաքննելու համար:

Լիբանանի հասարակության սիրիամետ եւ հակաամերիկյան մասը այս որոշումը (որի հետ համաձայնեց վարչապետ աս-Սինիորայի կառավարությունը՝ նման որոշման ընդունման համար անհրաժեշտ քվորումի բացակայության պայմաններում) առիթ դարձրեց, որպեսզի «տարօրինակ ընդդիմությունը» (այդպես են անվանել արեւմտյան լրատվամիջոցները «Հիզբալլահի», «Ամալի» եւ քրիստոնեական փոքրամասնության միասնական հակակառավարական դիրքորոշումը)՝ Նասրալլայի եւ Աունի ղեկավարությամբ, պահանջի կառավարության հրաժարականը՝ կազմակերպելով զանգվածային ցույցեր եւ երթեր:

Ընդդիմության պահանջն այն է, որ ստեղծվի նոր կառավարություն, որի կազմում ընդդիմությունն ունենա այնպիսի ներկայություն, որ կարողանա հակազդել մեծամասնությանը, այսինքն՝ փակել այն որոշումների ճանապարհը, որոնց շուրջ համաձայնության գալն անհնար է, քանի որ դրանք բխում են սկզբունքորեն հակադիր դիրքորոշումներից: Միայն այդ դեպքում, ասում են ընդդիմության առաջնորդները, հնարավոր կլինի կանխել նոր քաղաքացիական պատերազմը:

Կառավարության առաջնորդները մերժում էին «միտինգային եղանակով» նման հարցեր լուծելը: Վարչապետ աս-Սինիորան պատասխանում էր հրաժարականի պահանջներին, որ կառավարությունը կազմվել է երկրի խորհրդարանի կողմից, ուստի նրա հրաժարականի կամ վերակազմավորման հարցը նույնպես պետք է այնտեղ լուծվի:

Կողմերը նաեւ իրար մեղադրում են երկրի շահերը դավաճանելու եւ արտաքին ուժերին ծառայելու մեջ:

Վերջապես Արաբական պետությունների լիգան ձեւավորեց մի առաջարկություն, որը Բեյրութ բերեց այս կազմակերպության հատուկ բանագնաց՝ Սուդանի արտաքին գործերի նախարարը: Առաջարկության էությունն այն է, որ կողմերը դադարեցնում են իրար դեմ կատարվող գործողությունները, կազմվում է նոր կառավարություն, որի 30 աթոռներից 10-ը հատկացվում է ընդդիմությանը, մեկը՝ չեզոք կողմի առաջադրած թեկնածուին, մնացած 19-ը՝ իշխող մեծամասնությանը: Կառավարության այսպիսի կազմը հնարավորություն է տալիս «Հիզբալլահին» փակել այն որոշումների ճանապարհը, որոնց ընդունման համար անհրաժեշտ են նախարարների 2/3-ի ձայները:

Կողմերը համաձայնել են այս առաջարկության հետ, սակայն սրանով հարցերը, բնականաբար, չեն լուծվում:

Խնդիրն այն է, որ Լիբանանի ներքին հարցերի լուծումն այնքան սերտորեն է կապված այս երկրի վրա ազդեցություն ունեցող արտաքին ուժերից, որ դրանք կարող են լուծվել միայն այն դեպքում, եթե իրենց

լուծումն են ստանում մրցակցող արտաքին ուժերի խնդիրները: Միացյալ Նահանգների Իրաքում խրված լինելու պատճառով՝ այս գերուժի ազդեցությունը տարածաշրջանում թուլացել է, ինչը հնարավորություն է տալիս այլ տերություններին եւ տարածաշրջանային պետություններին փորձել ամրապնդվել այստեղ:

Այսպես, Իրանը ձգտում է իր ազդեցությունը Լիբանանում դարձնել անհերքելի՝ «Հիզբալլահին» ապահովելով գործնական մասնակցություն պետության կառավարման համակարգում: Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի (յուրաքանչյուրը՝ իր դիրքից) համար իրանական, այսինքն՝ շիական ազդեցության աճը չափազանց վտանգավոր է թվում, քանի որ դրանով փաստորեն ավարտուն տեսք է ստանում Իրանի ազդեցության տակ գտնվող «գոտին», որն անջատում է Սաուդյան Արաբիան մնացած սուննիական արաբական աշխարհից եւ իսլամական աշխարհում առաջնորդի դերը ստանձնելու մրցակցության մեջ անբարենպաստ պայմանների մեջ դնում այս երկրները:

Մեծ տերություններից հատկապես Ֆրանսիան, Ռուսաստանը եւ Մեծ Բրիտանիան, իսկ վերջին շրջանում՝ նաեւ Իտալիան եւ Չինաստանը, ձգտում են օգտագործել իրավիճակը իրենց դիրքերը Միջին Արեւելքում ամրապնդելու համար, եւ այս առումով նրանց դիրքորոշումը բավականին տարբերվում է Միացյալ Նահանգների դիրքորոշումից: Այս պետություններն ավելի հակված են հակամարտող կողմերի միջեւ միջնորդների դեր ստանձնելու:

Լիբանանյան խնդիրների լուծման բանալին, թերեւս, գտնվում է Սիրիա—Իսրայել հարաբերությունների կարգավորման մեջ: Եթե Միացյալ Նահանգները, Սենատի եւ Կոնգրեսի ընտրություններում դեմոկրատական կուսակցության տարած հաղթանակից հետո, փոխեն իրենց քաղաքականությունը եւ փորձեն վերադարձնել այս երկու երկրները բանակցությունների սեղանի շուրջ՝ հիմնվելով Բարաք—Շիհաբի բանակցային գործընթացի արդյունքների եւ տրամաբանության վրա (այսինքն, լուծելով Գոլանի խնդիրը՝ վերադարձնելով այն Դամասկոսին, ինչի մասին կողմերն արդեն ձեռք էին բերել պայմանավորվածություն), ապա Սիրիան ինքնըստինքյան դուրս կմղվի Իրան—Սիրիա—«Հիզբալլահ» շղթայից, ինչը կկայունացնի Լիբանանի ներքին իրավիճակը:

Սակայն, որքանով որ կարելի է դատել Միացյալ Նահանգների նախագահի եւ Իսրայելի վարչապետի հայտարարություններից, նրանք այն քաղաքական դեմքերը չեն, որ նման բարդ եւ կամային որոշումներ կայացնեն:

Ուստի դեռ երկար ժամանակ Լիբանանում խաղաղությունը եւ կայունությունը կմնան «թեական» կատեգորիա:

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԻՍԼԱՄՈՒՄ

***Արաքս Փաշայան***

Գլոբալացվող աշխարհում մարդկությանը հուզող կարեւորագույն խնդիրներից մեկը բարոյական ավանդական նորմերի համատեղելիությունն է մարդու իրավունքների եւ ազատությունների ժամանակակից սկզբունքների հետ: Ուսումնասիրողները, մասնավորապես, նշում են, որ քրիստոնեական արժեքներից հեռացած Արեւմուտքը շփոթում է մարդու իրավունքներն «ամեն ինչ թույլատրելի է» դրույթի հետ:

Ներկայումս ի հայտ են գալիս քաղաքակրթական նոր մոտեցումներ, որոնք կասկածի տակ են դնում մարդու իրավունքների արեւմտյան հայեցակարգը (մասնավորապես 1948-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը) եւ առաջարկում են մարդու իրավունքների այլ հայեցակարգեր: Ասվածի ապացույցն է 2005թ. ապրիլին Համաշխարհային ռուսական ազգային 10-րդ հավաքում (սոբոր) ընդունված «Մարդու իրավունքների եւ արժանապատվության հռչակագիրը»: Հավաքի մասնակիցները կոչ արեցին ռուսական հասարակությանը՝ վերանայել համամարդկային հռչակված մարդու իրավունքները, որոնք մարտահրավեր են թե՛ ուղղափառությանը եւ թե՛ ռուս ժողովրդի պատմությանը: Հավաքում ընդունված փաստաթուղթն ըստ էության փորձում է ընդգծել Ռուսաստանի քաղաքակրթական յուրօրինակությունը եւ տարբերակել նրան լիբերալ արժեքներ դավանող Արեւմուտքից:

Նման մտայնություն գոյություն ունի նաեւ իսլամական աշխարհում, որն առաջ է քաշել մարդու իրավունքների եւ ազատությունների վերաբերյալ սեփական հայեցակարգը: Այն ամրագրվել է դեռեւս 1990թ. օգոստոսի 5-ին Եգիպտոսում Իսլամական կոնֆերանս կազմակերպության արտաքին գործոց նախարարների հանդիպմանն ընդունված *Մարդու իրավունքների Կահիրեի հռչակագրով:*

Իսլամը, որպես աշխարհայացքային համակարգ, ունի մարդու իրավունքների իր տեսակետը: Ղուրանում խոսվում է հավասարության, հավատքի ազատության, մասնավոր սեփականության եւ այլ իրավունքների մասին: Իսլամը ներառում է տնտեսական, սոցիալական եւ քաղաքացիական իրավունքներ, որոնք, ի դեպ, ընդհանրություններ

ունեն մարդու իրավունքների միջազգային հռչակագրերում առաջ քաշված դրույթների հետ:

Համաձայն իսլամի՝ Աստված մարդուն ստեղծել է որպես Երկրի վրա իր տեղապահ, որպեսզի նա ծառայի Աստծուն, կատարի նրա կամքը: Իր երկրային կյանքից հետո մարդը կվերադառնա Աստծուն եւ կկանգնի նրա դատաստանի առաջ: Մարդու հիմնարար իրավունքները՝ խոսքի իրավունքից մինչեւ կյանքի իրավունք, նրան տրվում են Տիրոջ կողմից: Նրա ամենաբարձր պարտականությունը Տիրոջ կամքին հնազանդվելն է, Աստծո հետ մշտապես կապի մեջ լինելը:

Կահիրեի հռչակագրում նշված է, որ բոլոր մարդիկ հավասար են մարդկային արժանապատվության, պարտավորությունների եւ պատասխանատվությունների առումով եւ չպետք է խտրականության ենթարկվեն ռասայական, սեռային, կրոնական, քաղաքական, սոցիալական, լեզվական եւ այլեւայլ հանգամանքների ու պատկանելությունների պատճառով (հոդված 1, ա): Բոլոր մարդիկ Աստծո ծառաներն են, եւ ոչ մեկը մյուսի նկատմամբ գերակայություն չպետք է ունենա (հոդված 1, բ):

Կյանքն Աստծո կողմից շնորհված պարգեւ է, իսկ ապրելու իրավունքը երաշխավորված է բոլոր մարդ արարածներին: Անհատների, հասարակությունների եւ պետությունների պարտականությունն է՝ պաշտպանել այդ իրավունքն ամեն տեսակ բռնությունից: Ուստի, կյանքից զրկելն անթույլատրելի է՝ բացառությամբ շարիաթով ամրագրված պատճառների (հոդված 2, ա): Հռչակագրում դատապարտվում է ցեղասպանության իրականացման ամեն մի փորձ (հոդված 2, բ):

Կահիրեի հռչակագրում խոսվում է նաեւ պատերազմի դեպքում մարդու իրավունքներին առնչվող հիմնահարցերի մասին: Ուժի գործադրման եւ զինված հակամարտության ժամանակ անընդունելի է սպանել ծերերին, կանանց եւ երեխաներին: Վիրավորներն ու տկարները բժշկական օգնություն ստանալու իրավունք ունեն: Պատերազմի գերիներն իրավունք ունեն սննդի, ապաստանի եւ հագուստի: Չի կարելի պղծել մահացածների մարմինները (հոդված 3, ա), քանդել քաղաքացիական շենքերը, կառույցներն ու հաստատությունները (հոդված 3, բ):

Կահիրեի հռչակագրում կարեւոր տեղ է հատկացված ընտանիքին՝ որպես հասարակական կարեւորագույն ինստիտուտի: Միմյանց հետ ամուսնանալու իրավունք ունեն միայն տղամարդն ու կինը, ինչի համար չկա ռասայական կամ ազգային սահմանափակում: Հասարակությունը եւ պետությունը պետք է վերացնեն բոլոր արգելքներն ամուսնության

ճանապարհին եւ հաղթահարելի դարձնեն ամուսնական գործընթացը: Նրանք պետք է ապահովեն ընտանիքի պաշտպանությունը եւ բարեկեցությունը (հոդված 5, ա):

Քանի որ իսլամում կնոջ իրավունքների հարցը բանավեճերի նյութ է, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաեւ մարդու իրավունքների այդ ասպեկտը: Հռչակագրում նշված է, որ կինը հավասար է տղամարդուն՝ մարդկային արժանապատվության առումով, ունի իրավունքներ ու պարտավորություններ, սեփական քաղաքացիական կարգավիճակ, ֆինանսական ինքնուրույնություն եւ իրավունք՝ պաշտպանելու իր անունն ու ծագումը (հոդված 6, ա):

Ծննդյան պահից ի վեր յուրաքանչյուր երեխա իրավունք ունի իր ծնողների կամ պետության կողմից ստանալու համապատասխան խնամք, կրթություն, ինչպես նաեւ նյութական, ֆիզիկական եւ բարոյական աջակցություն (հոդված 7, ա):

Գիտելիքի որոնումը պարտադիր է, իսկ կրթության ապահովումը հասարակության եւ պետության պարտականությունն է: Պետությունը պետք է ապահովի կրթական բազմազանություն՝ հասարակության հետաքրքրությունների շրջանակներում, այնպես, որպեսզի հնարավորություն տա մարդուն ծանոթանալու իսլամական կրոնի եւ տիեզերքի իրողությունների հետ՝ ի շահ մարդկության (հոդված 9, ա):

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ստանալ թե՛ կրոնական եւ թե՛ աշխարհիկ կրթություն ցանկացած տիպի ուսումնական հաստատության մեջ՝ ինքնազարգացման եւ Աստծո նկատմամբ հավատքը հզորացնելու համար (հոդված 9, բ):

Հռչակագրում նշված է, որ մարդիկ ծնվում են ազատ, եւ ոչ մեկն իրավունք չունի ստրկացնել, ճնշել կամ շահագործել նրանց: Մարդիկ որեւէ մեկին ենթակա չեն, բացի Աստծուց (հոդված 11, ա): Այս տեսանկյունից՝ բոլոր ժողովուրդներն ու պետություններն իրավունք ունեն ազատության, ինքնորոշման, ինչպես նաեւ իրենց հարստությունների եւ բնական ռեսուրսների օգտագործման ու վերահսկողության (հոդված 11, բ):

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ազատ տեղաշարժվելու եւ ընտրելու բնակավայր՝ իր երկրում կամ երկրից դուրս (հոդված 12): Յուրաքանչյուրն ազատ է աշխատանքի ընտրության մեջ, որի հարցում նրան պետք է օգնեն պետությունը եւ հասարակությունը: Անաշխատունակ մարդիկ պետք է սոցիալական ապահովություն ունենան (հոդված 13):

Յուրաքանչյուր անհատ օրինական եկամուտների իրավունք ունի՝

առանց մենաշնորհի, խաբեության, իրեն ու ուրիշներին վնասելու: Վաշխառությունը խստիվ արգելվում է (հոդված 14):

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի օգտվել իր ստեղծագործական գործունեության պտուղներից, պաշտպանել դրանցում առաջ քաշված գաղափարները՝ պայմանով, որ նրա գործունեությունը չհակասի շարիաթի սկզբունքներին (հոդված 16): Հռչակագրում նշված է, որ յուրաքանչյուր մարդ ունի սոցիալական եւ բժշկական ծառայություններից օգտվելու իրավունք (հոդված 17, բ), իսկ պետությունը պետք է ապահովի մարդուն արժանապատիվ եւ անվտանգ ապրելու իրավունքով: Նա պետք է կարողանա ապահով կերպով դավանել սեփական կրոնը (հոդված 18, ա):

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ (հոդված 19): Անթույլատրելի է առանց օրինական հիմքերի ձերբակալել մարդուն, սահմանափակել նրա իրավունքը, աքսորել կամ պատժել նրան: Չի թույլատրվում ֆիզիկական կամ բարոյական կտտանքները եւ կամ էլ ստորացումը: Չի կարելի մարդուն ենթարկել բժշկական եւ գիտական փորձարկումների՝ առանց իր համաձայնության (հոդված 20):

Յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը այնպես, որպեսզի այն չհակասի շարիաթի սկզբունքներին (հոդված 22), անուղղակի կամ ուղղակի մասնակից դառնալու իր երկրի գործերին (հոդված 23, բ): Չի կարելի հրահրել ազգային կամ գաղափարական թշնամանք կամ իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք կարող են ի հայտ բերել ռասայական խտրականություն (հոդված 22, դ):

Համաձայն իսլամի՝ մարդը պետք է ճիշտ գործողություններ անի եւ ձեռնպահ մնա ոչ ճիշտ քայլերից՝ առաջնորդվելով իսլամի հիմնարար սկզբունքներով: Մարդու իրավունքների իսլամական հայեցակարգն ի ցույց է դնում, որ ճիշտ չէ աշխարհի կենտրոնում դնել անհատին ու փառաբանել նրան:

Մինչդեռ արեւմտյան հայեցակարգում հենց ինքը՝ անհատն է, որն ամեն ինչի տերն է: Այսինքն՝ մարդն ինքն է որոշում իր անելիքը, կամ թե՝ ինչն է լավ, ինչը՝ վատ: Մարդու իրավունքների արեւմտյան դիսկուրսում սահմանված չեն նրա պարտավորությունները, ինչի արդյունքում ձեւավորվում է Արեւմուտքի հեդոնիստական, զգայական եւ նյութական մշակույթը:

Հատկանշական է, որ Կահիրեի հռչակագրում իսլամին առհասարակ մեծ դեր է վերապահված: Ըստ այդմ՝ իսլամն աշխարհում մշակութային եւ պատմական առաքելություն ունի, որը սահմանվել է հենց Աստծու

կողմից: Իսլամը հայտ է ներկայացնում իր ներդրումն ունենալ մարդու իրավունքների պաշտպանության հարցում՝ մարդկանց շահագործումից եւ հալածանքներից զերծ պահելու համար եւ հաստատում է արժանապատիվ կյանքի մարդու կամքն ու իրավունքը՝ համաձայն իսլամական շարիաթի: Իսլամական աշխարհը պետք է ճանապարհ ցույց տա մարդկությանը, որը մոլորվել է հակոտնյա միտումների եւ գաղափարախոսությունների մեջ:

Միեւնույն ժամանակ, պետք է նշել, որ չնայած Մարդու իրավունքների Կահիրեի հռչակագրի առկայությանը՝ իսլամական պետություններում այսօր հաճախ են անտեսվում մարդու իրավունքների հիշյալ սկզբունքները: Մարդու իրավունքների սկզբունքները խախտվում են անգամ իսլամական սկզբունքների հիման վրա խարսխված երկրներում, որոնցից է Սաուդյան Արաբիան, մի երկիր, որը հրաժարվեց 1948-ին միանալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարիամ Մարգարյան

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . . 1

Գագիկ Տեր-Հարությունյան

ԲԱԶՄԱԲԵՎԵՌ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ» . . . . . 8

Սուրեն Սարյան

ՆԱՏՕ-Ի ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՇՈՒՐՋ . . . . . 17

Սեւակ Սարուխանյան

ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
ԻՐԱՆ–ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ . . . . . 26

Սարգիս Հարությունյան

ԻՐԱՔՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ . . . . . 31

Դավիթ Հովհաննիսյան

ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԿՆՃԻՌ . . . . . 36

Արաքս Փաշայան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԻՍԼԱՄՈՒՄ . . . . . 40

*Շապիկի վրա՝*
***Ծաղկոցաձորի քարայրները (Անի)***

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
**Խմբագրական խորհուրդ**
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: